# ԴԱՄԲԱՆԱԿԱՆՔ

Ի

# ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

ԵՒ

## ԳՐԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ

Ի

Տ. ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅԷ Կ. ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԿԱԼԼԻՊՈԼՑԻ

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

**ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ**

*Սուլթան Համամ ճատտէսի, թիւ 14*

**1894**

A 1/15049

# ԶՕՆ

## ՆՈՒԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

## Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ ՍԻՐԵԼԵԱՑՆ

## ՀՈԳԵՒՈՐ ԾՆՈՂԻՆ ԻՄՈՅ

# Տ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

## ՄԵՐՈՎԲԵԱՆ

Բարեխնամ դասատուացս՝ Տիար Պաղտասարայ Միհրդատեան Վանեցւոյ եւ Տիար Կարապետի Պ. Աղարտըճեան Պոլսեցւոյ, եւ գորովագութ ծնողացս՝ Հաճի Կարապետ Աղայի Յ. Պարթեւեան եւ Տիրուհի Տիկնոջ Թ. Հաճըմեան՝ վախճանելոյ ի Տարտանէլ՝ եւ բարեպաշտ աներոյս՝ Հաճի Գրիգոր Աղայի Ս. Ազարեան՝ թաղեցելոյ ի Հռոտոս ընդ երթալն յուխտ յԵրուսաղէմ:

# ՆԱԽԱԲԱՆ

## ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

*Մշտասահ ժամանակին մերթ անուշ եւ հանդարտիկ, մերթ եւս մոլեգին եւ փրփրայոյզ մղմամբ, դէպ ի յառաջ կընթանայ ամէն ինչ՝ որ բնութեան անյեղլի եւ յաւիտենական օրինաց ներքեւ կայ ու կը մնայ փակուած։ Մարդ՝ այն մտաւոր արարածն՝ տիեզերական այդ արժանահրաշ տեսարանին դիտողն՝ իւր ընթացքին մէջ կանգ կառնու յաճախ, իւր գտնուած ներկայէն դէպ ի յառաջ եւ յետս, յաջ եւ յահեակ, մտասեւեռ, հիախառն ակնարկներ սփռելով իւր շուրջը։*

*Թէ եւ ան, հիւլէ մ'է, կամ միջակէտ մ'է այդ անհուն մշտնջենաւորութեան յիշատակարանին անքաւ տողից ընդ մէջ, կամ լաւ եւս՝ փոշի ցնդելի անոր անհունութեան ծոցին մէջ, այլ սակայն առ ոչինչ գրելով իր գոյական անզօրութիւնն՝ անդուլ անդադար գուն կը գործէ. միշտ ճախրել եւ սաւառնիլ մտովք, ինչպէս եւ վերջերս մարմնով իսկ, որպէսզի կարող հանդիսանայ մշշապատ մութ անցեալն հետազօտել, հեռի՛ ապագայն թափանցել եւ նախատեսել, ապահովելով անստոյգ ներկայն. սակայն անդէն եւ անդ՝ յաղթապանծ ներկայն նմա կը ներկայանայ՝ հոծ, երեւելի անցեալն՝ փոս մը եւ եթ, եւ աներեւոյթ ապագայն՝ անկերպարան քաոս մը որ եւ իսկ է ալեւորիկն Յաւիտենականութի՛ւն . . . ։ Սոյն յաւիտենականութեան յիշատակալից ովկեանէն, այդ վաղանցուկ մահկանացուն՝ բազմաթիւ դիպաց տպաւորութեան ներքեւ՝ վճիտ մարգարտանման կաթիլներն քաղելով, կը սիրէ իւր յուշերուն հետ մէկտեղ, նուիրել ապագային. Թուագրելով ամսովք եւ ամօք, որ է Քրոնիկոն կամ ժամանակագրութիւն՝ բաղկացուցիչ մասն պատմութեան։*

*Հետեւաբար՝ մեր վաղանցիկ կեանքին ունայնութեանց հանդէպ՝ եթէ կայ անվրիպելի ճշմարտութիւն մը, կամ մանաւանդ եթէ կայ անաչառ դատաւոր մը, եւ կամ եթէ ամենահզօր ախոյեան մը, աներկբայապէս այն ալ գիտեմք թէ մեր անխուսափելի մահն է։*

*Այո՛, սուղ կեանք մը՝ ցաւաքոյր վշտերով պաշարուած, այսինքն՝ հիւանդութեամբք, եւ ախտիւք՝ կը վարէ հէգ մարդս, թէեւ այդ դառն կենաց տեւականութիւնը սովորաբար իբր հարիւրամեայ կամ դար մը պսակէ, բայց եւ այնպէս ամեն օր ականատես վկայ-*

ներ եմք թէ հազուադէպ է այդ, զի գրեթէ միշտ այդ միջոցին կէսն կամ երեք եւ կամ մէկ քառորդն կը տեւէ. եւ թէ մինչեւ իսկ ա՛հ, որքան յաճախակի իրարու կը մօտենան մանկան զուարթ օրօրանը եւ մահուան տժգոյն դամբարանը . . . ։

Անգութն Պարկայ, կամ Հրեշտակն անողորմ, իւր մահացուցիչ մանգաղովն անխնայ ու անխտիր կը հնձէ ամեն հասակ՝ նորածին երախայն, ծաղկատի մանուկն, զուարթ պատանին, հուժկու երիտասարդն, չափահաս այրն եւ մանաւանդ կորաքամակ ծերն՝ որ է վերջին դերակատար այս կենցաղական տեսարանին ։

Վերջապէս մեր կեանքը գետ մ'է սրընթաց, որուն անդիմադրելի հոսանքով դէպ 'ի մահ կը մղուիմք անդադար , եւ որքան սրտայոյզ է Եւրոպացի նշանաւոր Գրագէտին Պ. Լամընէի՝ մահուան գոհից առթիւ ըսած խօսքերէն սա հատակոտորը ։

«Անոնք ալ անցան այս աշխարհի վրայէն , խորասուզուեցան ժամանակի գետոյն մէջ. հազիւ նոյն գետոյն եզերքը լսուեցաւ անոնց ձայնը եւ բոլորովին լռեցին ։ Ո՛ւր են նորա, ո՛վ մեզ պիտի ըսէ, Երանի՜ անոնց որք ի Տէր ննջեցին»։

Ահա այդ խորհրդաւոր գետոյն եզերքն է մեր կեանքին վախճանը, հոն կերկննայ մեր սեւ գերեզմանը, ուր ի հող կը լուծուի ամեն մարմին հողածին . . . ։ Աստուածադիր է այս վճիռը եւ Անսահմանին սահման. զորմէ կը պատմեն Ս. գիրք եւ բնութիւն գլխովին եւ տիեզերքն համայն . . . ։

Արդ՝ գործոյս նպատակն է, ոչ միայն յաւէտ անմոռաց պահել մեր կենցաղական վիճակն , այլ եւ այնու՝ թէ մեր կողմանէ յօրինուած , եւ թէ մէկ երկու վայրերէ քաղուած . սուրբ ու պաշտելի յիշատակներու տժգոյն ու մելամաղձոտ ծաղիկներ նուիրել հետաքըրքիր բանասէրներու մտաց ։

Խ. Ց. Կ. Պ.

# ԴԱՄԲԱՆԱԿԱՆՔ

# Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

ԵՒ

## ԳՐԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ

## I.

## ՄԱՀԱՐՁԱՆ

ՀԱՆԳԶԻ ԱՍՏ
Ի ՅԱՑՍ ՏԱՊԱՆ
ՔԱՀԱՆԱՅ (1)
ՏԷՐ ՍՏԵՓԱՆ·

7 Յունվ· 1834

(1) 1680 *թուականէն սկսեալ մինչեւ ցարդ* 214 *տարուան մէջ տեղւոյս Ս. Թորոս Եկեղեցւոյն մէջ ծառայող ի Տէր հանգուցեալ քահանայից թիւն է* 25. (*միայն թուականէս առաջ* 81 *տարուանը անյայտ է*). *եւ նոցին անուններն են. Տ. Վարդան Մեծ, Տ. Միքայէլ Աչուխ, Տ. Ապտուլլահ, Տ. Մկրտիչ Ոսկերիչ, Տ. Պօղոս Աւագերէց, Տ. Սարգիս Թօխաթցի, Տ. Խաչատուր Սիլիստրէցի, Տ. Թորոս Երուսաղէմացի, Տ. Թորոս Ղուպասըրեան, Տ. Խաչատուր Տր. Խաչկօեան, Տ. Յարութիւն Նորընծայ Տ. Խաչ–*

## 2.

### Տէր Թէոդորոս քահանայ Թորոսեան

*Հայր դու՝ Երկին, մայրս՝ Երկիր,
Առ ձեզ դարձայ, զոր վճռէ գիր.
Յուսով էի, ո՜հ, թելադիր,
Րոպէ մահու, հաս փշտակիր.
Իբր ութ տարի, Հօր որդեգիր,
Կենաց Բանին, սպասադիր.
Ի չիրմիս կամ, հող, աճիւն, կիր,
Բարբառ փողոյն, մինչ գոչէ ցիր.
«Արի՛ք, մեռեալք», բան յուսալիր,
Նայեա՛ յիս, Տէ՛ր, Նէ՛ր լուսակիր:

24 Սեպտ. 1850

---

կօյի թոռն, Տ. Յարութիւն Խաչկօյի փեսայն, Տ. Մարգար, Տ. Մերկիկ Սուլու-Մանաստըրցի, Տ. Մկրտիչ Երզընկացի, Տ. Յովհաննէս Տր. Յարութիւնի Գասպարեան, Տ. Պօղոս Զիմառացի, Տ. Յովսէփ Յակոբու Զամչիւրիւքեան, Տ. Թորոս Տր. Յովհաննէսեան, Տ. Յակոբ Գէորգայ Մօստուրաեան, Տ. Ստեփան Յակոբայ Զադըրեան, Տ. Յովհաննէս Յովհաննէսի Կէչմէեան, Տ. Պօղոս Հաճի Ալիքսանի Տր. Պօղոսեան, Տ. Թէոդորոս Թորոսի Ստէֆանճեան, Տ. Գրիգոր Խօսրովեան Բաղիշեցի:

* Հայրիկի Բան. (Գրքոյկիս աստղանիշք գրեթէ միշտ կը յայտնեն թէ տողից սկզբնատառերն կը յօդեն անուն կամ բան):

## 3.

Ճան ճէսէտտէն ճէնապա

16 Օգոստ. 1854

**ՍՐԲՈՒՀԻ Թ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ**

Թէն թօփրագտան թիւրապա

---

## 4.

*Այլ Ատրոպոս* խեթիւ*
*Հայեցեալ յարեւդ,*
*Ձգեաց յայս 'ի խոր.*
*Ուր օտար արփիք,*
*Ցանլոյս գիշերիս,*
*Տքնին սգաւոր:*

*Տէր Պօղոս քահանայ՝ որդի մեծի*
*Ալիքսանի՝ 'ի Նահանգէ Ակնայ,*
*Հանգչի ընդ մահարձան վիմաւս*
*Որ դրոշմեալ յայտնի կայ:*

Ցամի Տեառն 1862

---

* *Մին յերից քերց Պարկայից, որ կտրէր զթել մարդկան ըստ դիցաբանից:*

*(Այս մահարձան ի վաղուց յօրինեալ էր 'ի հանգուցեալ դասատուէ իմմէ ի Տիար Պաղտասարայ Վանեցւոյ, որ զառաջինն եմոյծ զհայախօսութիւն ի մերս տեղական ժողովուրդ):*

## 5.

### Հճի Եղիազարեան Սարգիսին օղլու Սէմէրճի հճի Աբրահամ·

13 Փետր. 1865

*Է՛յ ճիվան, տիւշիւն չու նիհայէթի,*
*Ալտանմա՛, պօ՛շ տուր տիւնեա միննէթի·*

---

## 6·

**Պու տիւնեա ֆանի, օլ ախրէթ պագի հէր պար·*
*Էֆլաքտէն էնտի օլ րուհ էզլիյիլ ճէպպար·*
*Նէճրիմ սարարտը, ճանըմ թիթրէտի եէկպար*
*Գուտտաս իւլ գուտտաս Տէր Յովհաննէսէ խէպար·*
*Ո՛հ, օղուլլարըմ, Կարապետ, Մելքոն, Գասպար,*
*Հէմ տէ Պաղտասար, Աւետիս, Թորոս ի՛պար·*
*Ա՛հ, գըզըմ Մարիամ, Յակոբում տա պէրապար·*
*Բամագըմ կէօրիւպ, գալպլէրի օլտու սէպար,*
*Իշպու մէզարէ իլմա օլտում պաթէպար,*
*Նամըմ միւսէմմա օլմուշ երէցկին Գոհար·*
*Է՛յ ճան, ճանըմա պիր «Հայր մեր»լէ օ՛լ տուաքեար·*

10 Յունիս 1865

---

* Պէն Գոհարինէ

## 7.

*Մէսմթուր օլան չու թաշ նիշան,
Եատւքեար օլա, տիւննեա եալան·
Լիզամ կէլիր, պիլմէզ աման,
Փէմէնտ օլուր, վիրմէզ զէման,
Ո՜հ, եաշ եիրմի պէշ տի ճէման,
Նամըմ Մելքոն Տէր Յովհաննէսեան։

29 Նոյեմ 1868

---

## 8.

Հաճի Թագւոր Աղա Տէր Յովսէփեան

Ծան ճէսէտտէն ծէնապա·
Թէն թօփրագտան թիւրապա։

1870

---

## 9.

**Թա՛ճիլէն մէլէք կէչտի գարշըմա,
«Ա՛խ, աէտիմ, աճը՛ չու կէնճ եաշըմա»,
«Գատէր թա՛մ, աէտի, պագմամ եաշընա,
Ուլու Պարի էմրի, պօ՛ւ տուր պաշընա»·
Հասրէթլի անամ հէփ սավաշըմա,
Իչի տաղլանտը ճան աթըշըմա·

---

* Մելքոն։

** Թագուհի հանըմ։

*Հէնուզ պասարտըմ եիրմի եաշընա,*
*Աճը մէվթ պէնի աթտը նաշընա․*
*Նութգ է՛թ պիր «Հայր մեր» մէզար ճաշըմա․*
*Մէսթուր տուր խամիմ սաթըր պաշըմա։*

2 Ապրիլ 1870

Ասիպի Մարթանըն գըզը Թագուհի։

---

## 10.

Պու մէզարտա սաքին

Հճի Յակոբ Աղա Տէր Յովսէփեան․

10 Յուլիս 1870

---

## 11.

**Բէնչէն աճը, եա՛ մէվթ, վէրտին պանա անը․*
*Ռուհ թէսլիմ հէյլաճտէ, թէրք էթտիմ ճիհանը․*
*Ահ լէպ օլտու փէտէր վէ մատէր տիհանը․*
*Բէս, թագտիր իլահի, սագընմազ շահանը․*
*Իլմա օլտում գապրէ, մէսթուր չու պիւրհանը։*

Մճի Սարգիս Աղանըն Քէրիմէսի Բրաքիոն Հանըմ․

10 Յունվ․ 1873

---

* *Բրաքի։*

## 12.

## (ՄԱՀԱՐՁԱՆ ՁՈՐԻՑ ՊԱՐԹԵՒԵԱՆՑ)

*Բարձրելոյն աջած զՊօղոս Կորդուաց (1) յերկրէն.
Աստ պանդխտեալ՝ հայր լեալ՝ Սարգսի բնիկ մօրէն.
Նաեւ ապա Թոռնն Յովհաննէս յԵրկնաւորէն,
Քաղցրիկ սիրոյ զԿարապետ առ փոխարէն։

---

* Բանք Խորենայ։

(1) Ասկէ 22 տարիներ առաջ, 22 տարեկան հասակովս, ծննդական քաղաքիս Ազգ. Նախակրթարանին մէջ իբր դասատու ծառայած միջոցիս, ինձէն թելադրուեցայ այդպիսի պատմաքանական ձեւ տալ հանգուցեալ հօրս՝ Հաճի Կարապետ աղայի՝ պարզ տապանաքարին, որպիսւոյն՝ փափաքելի է որ՝ հետամուտ լինէին ուրիշներն ալ, 'ի բաց թողլով ընդ միշտ այն հնադարեան ձեւերն եւ մանաւանդ «Այս է տապան հանգստեան...» միօրինակ ընդօրինակութիւնն։ Ցարդ 170 տարիներ սահած ու անցած են վերոյիշեալ Պօղոսի օրէն 'ի վեր, որ՝ ինչպէս վերագոյն ըսուեցաւ, որ Քիւրտիսթանի կողմերէ միայնակ գաղթած եւ տեղս հաստատուելով ամուսնացած եւ գաղթածիններ ունեցած է, որոց միայն արական սեռէ սերածներէն այժմու գտնուածներն կը կազմեն միայն 6 տուն ուրոյն ուրոյն ընտանիքներ՝ ընդամենն բաղկացած 40ի չափ անհատներէ։ Արդէն իբր 300 տարիէ 'ի վեր, Քէմախէ եւ շրջակայ գիւղերէն Րումէլի գաղթող Հայոցմէ միայն իբր 7—8 ընտանիք Կէլիպօլու ապաստանած եւ այժմու 206 տունն բաղկացնելու բաղդին արժանացած. եւ ետքէն զանազան ժամանակներու մէջ աւելի աճած են շնորհիւ

*Խառնուրդն այսպէս սահեալ ամացն համօրէն,*
*Ողջ բոլորեալ ց'արդ դար և կէս Պօղայ յօրէն.*
*Րաբունեայն ձայն կոչեաց նոցա օրհաս վերէն.*
*Երանի՛, ո՜հ, որոց ի Տէր հանգեան պարեն,*
*Ներբողելով եռալուսեան զՏէր ՈՐ ԷՆ.*
*Արձանս կանգնի 'ի յիշատակ որդւոյ Թոռէն.*
*Ցայսմ՛ չիրմի զոսկերս* Նախնեացն եդ Տ. Խորէն.*

Մահ այդ Կարապետի յեօթանասնամենի

ի 6 Սեպտ. 1873 ամի:

---

*այլ եւ այլ տեղերէ քաղաքս հաստատուող Հայ գաղթականներու, ինչպէս որ 150 տարիներէ՝ ի վեր՝ խնամով պահուած ձեռագիր Կոնդակ մը եւ ձեռագիր մնացած «Պատմութիւնս» զայդ կ'ապացուցանեն՝ երկրի կամ գաւառի կամ քաղաքի եւ կամ գիւղի անուանով յորջորջուած բազմաթիւ մականուններ պարունակած ըլլալով: Սոյնպէս յիշեալ Պօղոսը իւր եկած երկրէն պատճառ առնլով, տոհմային մականուն կ'ստանայ «Թիւրոտեան» կոչուելով, եւ որ՝ սակայն քառորդ դարէ 'ի վեր 'ի «Պարթեւեան» փոխարկել, հարկ եւ պատշաճ համարած եմ.*

* *Փոխադրեալ 'ի հնոյն 'ի նոր Գերեզմանատուն, հաստատուած յ'9 Յունվ. 1878 ին.*

## 13.

*Զալիմ զէհիր Թալիպինտէն* (1),
*Ճան ուչտու թէն ճանիպինտէն,*
*Պու թագտիր տիր Սահիպինտէն։*

Սին 20   1873   21 Յուլիս

Սաաթճը մհտ Յակոբ Կ. Գումրուեան

---

## 14.

*Աճը էօլիւմիւն հարպի ալէթի,*
*Օթուզ պէշ սինտէ սօյտու թագէթի·*
*«Րահմանի րահիմ Րապպին սէօհպէթի,*
*Ագտէմ թօփրագտըն, թօփրագ ախըրէթի»։*

Հճի Սարգիս Աղանըն զէվճէսի Թագուհի Հանըմ·

13 Մարտ 1874

---

## 15.

Աստ հանգչի Մ· Նուրի, Դուստր Մ· Վահանայ
Կին Մ· Յակոբայ Տէր Յովսէփեան·
Ի հասակի 75 ամաց, ՚ի 14 Մայիս 1875 ամին·

Կալլիպոլիս

---

(1) *Վասն զի սխալ տրուած դեղով մը թունաւորուած էր։*

## 16.

## ՄԱՀԱՐՁԱՆ

Մայիս 30 1876

Տէր Յովհաննէս քահանայի հանգուցելոյ 'ի Տէր

*Ի քոյ հանգիստ, Տէ՛ր, հնչեաց ինձ հրաւէր.
Խորհուրդ, խաչ և սէր, յերկրէս՝ ուր ցուցեր,
Ուստ 'ի Սիօն վեր, յերկին կոչեցեր.
Բաք վճիռ հարեր, մինչ Նախատիպն էր,
«Երբ կեանքս է յեղեր, դարձցի՛ յար յաւերը».
Նիշ խաչիդ յեթեր, մինչ կայ լուսահեր,
Ա՛ռ, ընկա՛լ զիս, Տէ՛ր, փառացդ առընթեր,
Յոր համայն յերեր, զքեզ օրհնեն Հայր մեր։
Քէլամուլլահըն էմր ալիսինէ,
Աճիզ խըզմէթիմ 46 սէնէ.
Հուլուլ էտինճէ թամ 80 սինէ,
Ա՛խ, մէլէք կէլտի սինէ պէ սինէ,
Նայիլ ու մայիլ ճիհան նէսինէ.
Ախրէթ աղըպէթ վար տըր հէփսինէ.

## 17.

Ի Տէր

Հանգեաւ Բէյլի(1) Մ. Ղազար Ս. Կիւրճեան

**Խոր 'ի նինջ, կէի մինչ,
Ողջոյն եւ, մահն ուտիչ.

* Ի Խորենայ քահանա... ** Խորենայ.

(1) Այսպիսի մակդիր ստացեր է իւր անուանն՝ առաջին անգամ գլուխը ֆէս դնելու արտօնութիւն շնորհուելով երբեմն քաղաքս այցելող վերջին Սուլթան Մահմուտ մեծ կայսրէն։

*Ողջոյն ետ, մահն ուտիչ·*
*Բահ, բահ, հող, թի, բրիչ,*
*Են բաժին, չիք աստ ինչ·*
*Ներ ութսուն ամաց մինչ,*
*Անձն իմ առ հանգիստ ջինջ,*
*Ցոր կոչեաց Արարիչ*

*Ի* 10 Մայիս 1877 ամին·

---

## 18.

## ԴԱՄԲԱՐԱՆ

Պէզիրճի ճճի Աբրահամու Գէորգեան,
Ի Տէր հանգուցելոյ, 'ի հասակի 77 ամաց,
22 Օգոստ. 1877

*Մէզարըլըգ տախիլինտէ* 1846 *Մայիս* 22*տէ*
*Եափըլան չէշմէ պու ղամըն խայրաթը տըր*·

---

## 19.

Առ Աստուած փոխեցաւ Տիկին ճճի Մարիամ
Հճի Գիրգոր Աղայի Յ. Առուքեան,
Ի սիս 33 ամաց, 'ի 4 Նոյ. 1877 ամին·
Կալլիպոլիս

---

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ … ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

**20.**

Աստ հանգչի Վարդան Տէփլէքեան.

81 տարիքն, 6 Նոյ. 1877

**21.**

Ի Տէր հանգեաւ Յովհաննէս Թ. Կիւրճեան,

Ի հասակի 11 ամաց, 'ի 17 Մայիս 1878.

**22.**

*Քնարանս է հճի Մարիամ խաթունի,*
*Մօրն Արթինեան հճի Սարգիս Աղայի,*
*Հանգուցելոյ աստ 'ի տիս հասուն հասակի.*
*Անդ Տէր հանգուսցէ 'ի լուսաճեմ խորանի.*

21 Յունիս 1878

**23.**

Մարիամ Յ. Տանկազեան

**Պասար իքէն դատէմ օն եէտի սինէ,*
*Աճը էճէլ կէլտի մէլէք սէսինէ.*
*Րուհ ուչտու մահալը էպէտիսինէ,*
*Թէնիմ կէօ'ր նէ' օլտու, չու հալ հէփսինէ.*

27 Հոկտ. 1878

---

* *Պարթ, կրճատուած «Պարթեւ»էն.*

## 24.

Ի Տէր

Յիսուս Քրիստոս

Հանգեաւ ննի Բարսեղ Մ· Հանըրմեան,

ի տիս 61 ամաց, 'ի 20 Մարտ 1879 ամին·

## 25.

Հանգչի ընդ վիմաւս

Հնի Յովսէփի Աղայ Յ· Տէր Յովսէփեան

*Խալիգ Ալլահ ճիսմիմ ճանլէ էթտի հայ·
Ումում կիպի ագար էօմրիւմ այնի չայ·
Րուհում ուչտու, մէզար օլտու պանա ճայ·
Էօլիւմ պէօյլէ անը վուրուր ճանա եայ·
Նիշան թաշըմ, եա՛ գարտաշըմ, սանա սայ·
Իշթէ ախրէթ գափուսու պո՛ւ, գօփսա գայ·
Նութգ է՛թ «Հայր մեր», է՛յ ախնեավի, ճանա փայ·

61 սին      21 Մայիս      1879

## 26.

Թագուհի կին Յակոբ Աղայի Գարաճէյզեան,

Որ խառանմամբ' եթող զայս աշխարհ·

Ի 17 Սեպտ· 1880 ամին:

---

* Խորէնին·

**27.**

Աստ հանգչի հնի Սառա՝ կին Արթինի
Գալըպճեան. 91 տարիքին. 24 Հոկտ. 1881
Եւ որդին հնի Կարապետ

---

**28.**

Յակոբ Աղայ Չինարեան,
Արուեստիւ զոլով դարբին,
Ծնեալ 'ի 1825 եւ հանգուցեալ
Ի 15 Մայիս 1882 ամին.
*Յանմահ յիշատակ կանգնէ զայս արձան*
Փաստաբան որդին Գասպար էֆ. Չինարեան
*Աղօթեցէ՛ք*

---

**29.**

Թագւոր էֆէնտի Յ. Լեւոնեան
Քէշանտա ա՛շար մէ՛մուրու իքէն
54 չաղրընտա վէֆաթ էյլէտի
13 Փետր. 1883

*Կիտէր էլպէթթէ կէլէն ճիհանէ.*
*Էմրը Հագգ տըր պո՛ւ, քիմէ պէհանէ։*

*Տիւշտիւ Էճէլ Րուհըմա,
Խիւտա Ումիտ Րահըմա,
ԷՕլիւմ Նէ՛ Պին Ահըմա.
Րահմ Թուլթմաղ Եաշ Վահըմա.
Է՛յ Ահպապ Նիկեահըմա,
Նիեաղ Տէյին Րուհըմա։*

---

## 30.

### Յարութիւն Աղա Պագալ Պօղոսեան

Առ Աստուած փոխեցաւ 'ի տիս 55 ամաց,
յ'7 Մարտ 1883 ամին։

---

## 31.

### Ազնուափայլ Տիկին Մաննիկ Յ. Նահապետեան

Հանգեաւ 'ի Տէր Յիսուս, 'ի հասակի 19 ամաց
Ի 20 Մայիս 1883 ամին։

*Այլ Բաբէ՛ Գիշեր, Դառնասուգ Եղեր,
Զարհուրական էր, Ընկճէր Թոքաւեր.
Ժամ Ինքնահրաւէր, Լոյսըս Խաւարէր,
Ծաղիկս կենսահեր, Հողադարձ Զուլէր.*

---

* *Տ. Խորէն. իսկ բովանդակ բառից սկզբնատառերը յօդելով կը կազմուի այսպէս. Տէր Խորէն Պարթեւեանն ար։*

Ղեղակոծ Ճչէր, Մանկիկս Ցորրան Ներ,
Շիթ.ք, Ողբ Զարըմբեր, Պաղ, Ջան.ք, Ռահ Ստուեր.
Վերնախնամ Տէ՛ր, Բախճանաւ Ցնծբեր,
Իւսցի Փառահեր, Բոյդ Օրհներգաւէր (1)։

---

(1) Վերոյիշեալ տաղանագիրը՝ ինչպէս ակներեւ կը տեսնուի, կազմուած է 37 բառերէ, անոնց գլխագրերն կարգաւ կը ներկայացնեն Հայկական ամբողջ 36 տառերն՝ յունական օ ով հանդերձ։ Ի նմին տեսնուած «Եղեր» բառն պէտք է «ողբ» կամ «լաց» թարգմանել։ Իսկ ոտանաւորին բովանդակ նշանակութիւնը կը քաղուի այսպէս. Այլ ափսոս, ինչ գիշեր էր այն եւ անոր ողբն որքան զարհուրելի, խեղճ Մանկիկ Թոքերուն քայքայմանը տակ կը տառապէր, օրհասի ժամը գալով անոր աչաց լոյսը կը խաւարէ, եւ այդ կենսահեր ծաղիկը թառամելով հող կը դառնայր, թէեւ մանկիկը իր օրօրանին մէջ դառնապէս կը ճչէր, սակայն եւ այնու ամենայնիւ այդ արտասուաց շիթերը եւ անտանելի ողբ ու կոծերը ուրիշ բան չեն, բայց եթէ ցուրտ կամ անօգուտ ջանքեր եւ կամ ստուերամած եւ մութ ճամբայ ուր վտարուած է անել անվերադարձ կերպով։ Ուրեմն Վերնախնամ Տիրոջ քով հաւատով դիմած՝ ուրախութեամբ եւ փառօք պսակուելու համար օրհներգաւէր կամ աղօթող կը ներկայացուի նոյն ինքն ննջեցեալն՝ 'ի մխիթարութիւն իւր սգաւոր ծնողաց։ Դիտելի է նաեւ թէ՝ «ցնծբեր» եւ «ւիւսցի» բառերն կրճատմամբ գործածուիլ հարկ եղած է, պարտին ըլլալ «ցնծաբեր եւ «ւիւսեսցի» կամ «հիւսեսցի»։

## 32.

### Թէքիրտաղլը ճնի Թադէոս աղա Կ. Զիզմէճեան

3 Յունիս 1883

*Խիւտա էմրին կէօ՛ր, օլունճա նազար,
Ուչտու հայյ ճանըմ, թէնէ խաք մէզար,
Րէճա քեար իթմէզ, վէ նէ՛ ախ ու զար,
Իճէլէ գուրպան հէզարան հէզար.
Նուրի գըյամտա, է՛յ Րապպ գըլ նազար,
Իպրէթ ալէմէ հէմ Սէն հէմ Ղազար.
Նամըմ Թադէոս, սին 50 կիւզար,
Տուա ճանըմա, գըլըն եա՛ հուզզար:

---

## 33.

### Պաղտասար Աղա Տէր Յովհաննէսեան

Հանգեաւ 'ի Տէր, 'ի տիս 42 ամաց,

յ'2 Սեպտ. 1883 ամին:

**Կէօչտիւմ տիւնեատան մէզարիսթանա.
Ա՛խ, պու ճիհան տի՛ւշ, պէնզէր զընտանա.
Տինեարը ախրէթ վար հէր մէրտանա,
Նէ՛լէր փաշ օլսա օլ տէմ մէյտանա.
Աման Ալլահըմ՝ տավէթ սէտանա.
Է՛թ պէնի նայիլ ճէննէթ խէնտանա:

---

* Խորէնին:
** Կատնաէ, որ «Կատինայէ»ին կրճատումն է:

## 34.

Հճի Տիգրան Ն. Զաքալպաճեան

19 սին 9 Սեպտ. 1883

*Անը էճէլ վուրտու ճանա,
Ջընտան օլտու ճիհան պանա.
Աղլաշըրլար պապա, անա.
Տէրտէ տէրման Եարատանա,
Խաս կէնճլիյիմ գուրպան ըանա,
Ուշուր օլսուն չու ճիհանա.
Բուգը մահշէր վար ինսանա,
Է՛յթ տուա՛լէր, կէ՛լ իմանա,
Նիհայէթին իշթէ սանա.

## 35.

**Մէլէ՛ք, կէ՛լ, անը՛, սէն պէնի ամա՛ն.
Ալէմտէ եօ՞գ մու, տէրտիմէ տէրման.
«Բապա էմրի՝ տէտի, պիլմէզ հիչ զէման.
Ազատ էտէմէմ, նէ պէն, նէ՛ Լօգման».
Բէսլէնտիմ տինլէ՛, չու տիւնեա ումման.
Ագըպէթ էճէլ, պիր տիւշման եաման.
Սինն 45, իսմիմ, Մ. Ալթին Արութեան.
Իման՝ Ումիտ՝ Հուպպ, է՛յ Իսա իման.
Էյլէր ճէննէթտէ ճիւմլէյի շատման.

29 Սեպտ. Տու՛ալէ՛ր. 1883

---

* Ազատ Խորէն. ** Մար Աբասի է.

## 36.

Փաթրիգ հնի Համբարձում Աղա Մանուկեան
Առ Աստուած կոչեցաւ 'ի տիս 85 ամաց,
Ի 28 Դեկտ. 1883 ամին.

## 37.

Տէր կոչեաց
Զքարեպաշտ հնի Եզեկիա՝ որդի
Ասիպեան Արթինի, 'ի հասակի 80 ամաց·
յ'30 Մայիս 1884 ամին։

## 38.

Ի Տէր հանգեաւ
Թորոս Յ. Զինարեան
23 սին.     1884 Հոկտ. 15

*Ա՛խ, փանի՛ տիւնեա, փանի՛ հէր տիրի·
Եաշ կէնճ՛քէն օլտում, փանիլէր պիրի·
Էճէլ աճըմազ, նէ՛ կէնճ, նէ՛ փիրի·
Ըրազ տըր սանմա՛, Ալլահ թէգտիրի·
Ինսաֆլա տիւշի՛ւն, չու չիրին չի՛րի·
Ունութմա՛ հէր տէմ, Մահշէր քէպիրի·
Օգ՛ու պիր «Հայր մեր», ա՛ն պէն փագիրի։

* Եօթնեակ ձայնաւորները կը ներկայացնեն մահար-ձանիս տողից գլխագրերն ։

## 39.

Տիկին Կիւլլիւ ճնի Մինասեան,
Դուստր Կարապետի ճնի Չէլէպիան,
Հանգեաւ 'ի տիս 61 ին,
Ի 14 Մայիս 1886 ամին.

## 40.

Ի Տէր հանգեաւ Կիւլլիւ խաթուն,
կին Մեսրոպեան Արթին Աղայի,
Ի հասակի 23 ամաց.

*Տիւշտիւ գալպիմ չարէսիզ տէրտ տիւմանընա.
Էճէլ ղալիպ օլտու վագթին Լօգմանընա.
Ռահիմ անամ կիրտի եասլար ումմանընա.
Խըշմը Գատէր պագմատը ղէլմ ամանընա.
Ույուտու թէն, րուհ ուչտու տիւն լիմանընա.
Ռահմէթ օգու՛ ճանըմ իչիւն Ռահմանընա.
Էմնիյէթ եօգ իշթէ տիւնեա զէմանընա.
Նազար էյլէ՛, կէ՛լ սատըգ օ՛լ իմանընա։

31 Մայիս 1886

---

* *Տէր Խորէն. (Դարդանէլի Հայոց գերեզմանատան մէջ կը գտնուի այն մահարձանը, որ տեղս չինուած եւ գրկուած է).*

## 41.

*Տէսմը էճէլ փէք զալիմ,*
*Էյթտի թօփրագ թէն տալիմ,*
*Րուհըմ կէօյտէ փէք սալիմ,*
*Սէօյլէ՛ «Հայր մեր«, էյ՛ ալիմ։*

Աննա Գ. Պէզիրճեան

11 սինն. 1886 Յուլիս 18

## 42.

Բարեպաշտուհի մհի Երանիկ, կին
հնի Նահապետ Աղայի Թ. Տէր Յովսէփեան,
Ի Տէր հանգեաւ 'ի տիս 45 ամաց, 'ի 1 Օգոս. 1886

*Երանի՛կդ 'ի քարիս, թռեար յերկին դու վաղվաղ.*
*Քոյ սիրելիք՝ որդիք, այրիք, զքեւ գոչեն միշտ աւա՜ղ.*
*Երկինք անշուշտ զքեզ կոչեաց, վարձ տալ գործոցդ խաղաղ.*
*Ե՛րթ դու, ոգի՛ երջանիկ երանելեացն յանվերջ խաղ։*

## 43.

Ասանէք Տ. Խ. Կ. Պարթեւեան

*Անմեղ հոգւով,
*Սլացար յերկին.*
*Անտես թեւով,*
*Նուրբ հրեշտակին.*

* *Ասանեթ։*

*Եղեր պատուով,*
*Թիւ երջանկին ։*

Ի տիս 2 ամաց, 10 Սեպտ. 1886

---

## 44.

Ի Տէր Յիսուս հանգեաւ,

Կարապետ Յ. Զօպանեան,

Ի տիս քառասնամեան,

Ի 28 Հոկտ. 1886 ամին

Կալլիպոլիս

---

## 45.

*Յ. Պաղտասարեան երկու Մանկիկներ,*
*Մէկ և եռամեան սիրուն մանկիկներ,*
*Առ Յիսուս թռեան զոյգ աղաւնիներ.*

Ի 12 Մարտ եւ 'ի 21 Հոկտեմբեր

1882 եւ 1886 ամաց Փրկչին ։

---

## 46.

Ի Տէր Յիսուս Քրիստոս հանգեաւ

Յովհաննէս որդի Պ. Թադէոսի Տէվլէթեան

Ի հասակի 27 ամաց, 17 Նոյ. 1886

*Ծան ճեմէտէն ծենապա*
*Կէօ՛ր, նաճըլ աչօնէր*
*Թէն թօփրագտան թիւրապա ։*

## 47.

### Ի Տէր հանգեաւ Տիկին Վերգին Մ. Մէնկէնէճեան

Ի հասակի 26 ամաց, 'ի 26 Հոկտ. 1887 ամին։

*Գերճ կը փայլէր ծաղկեայ հասակաւ,
Ա՜հ, մահու նիզակ զերթ կայծակ զարկաւ,
Րոպէից իմ՛ կեանք 'ի սեւ հող անկաւ,
Թախիծ ու կսկիծ սիրելեացս եկաւ.
Երկրածին ո՛վ մարդ, երկինք կայ հարկաւ,
Վերն ալ մտածէ, զքեզ փրկէ՛ տակաւ։

---

## 48.

### Առ Աստուած կոչեցաւ Տիկին Մարիամ,
### Կողակից Թագւոր Աղայի Տէվլէթէան

Ի տիս 47 ամաց, 21 Յունիս 1888

---

## 49.

Տիկին Սրբուհի Անատօլլուեան,
Դուստր Յակոբայ ընիկ Զինարեան,
Ննջէ աստ 'ի հող, տապան հանգստեան,
Առ Տէր փոխեցաւ ճիշդ երեսնամեան,
1889 ամեան, 'ի 19 երորդ Յունվարի ամսեան,
Հոգւոյն ասացէ՛ք աղօթք Տէրունեան։
Հայր մեր որ։

---

* Պարթեւ. (Այդ տապանագիրը տեղէս 'ի Պոլիս ղըր-կուած է 'ի խնդրոյ յիշեալ Մ. Մէնկէնէճեան էֆէնտիի),

## 50.

Յարութիւն որդի հնի Յակոբ
Աղայի Սարգսեան

*Ութամենայ ուստր,*
*Թռեա՛ւ, եւ յերկին,*
*Լնուլ զթերին,*
*Հրեշտակաց վերին.*
*Ի 13 Յուլիս 1891ին։*

## 51.

Տիգրան որդի Պ. Գրիգորի Կարապետեան

*Յայս դամբան եդար,*
*Դու մանուկ արդար,*
*Աստ երկամ դադար,*
*Անդ երկա՛ր ած դար,*
*Արդ փառօք զարդար։*
14 Նոյ. 1891

## 52.

Հնի Յակոբ Աղա հնի Եզեկիայի Ասիպեան
Հանգուցեալ 'ի 11 Յունիս 1892

*Մինչ բոլորէի կենօք կէս դար ճիշտ*
*Հարայ 'ի ժանտ մահ, իմք հարան 'ի վիշտ*
*Արտասուք և սուգ են մեր բաժին միշտ*
*Օ՛ն, մի՛ լինիր ռիշտ,*
*Լե՛ր բարեպարիշտ։*

## 53.

*Թաթէոս Ց. Չիղմէճեան,
Անմեղ տղայ իբր հնգամեան,
Դարձաւ առ Տէր եռալուսեան,
էր 1893 թիւ Տէրունեան,
Ու 22 մայիս ամսեան,
Սո՛ւղ աստի կեանք, ա՛նդ յաւիտեան։

## 54.

Հնի Աննա կին բարի հնի Եզեկիայի
Ասիպեան
Դուստր Տէր Ստեփանի հանգուցեալ քհնյի
Զազըրեան
Ի յեօթանասնամենի դնի յայմ տապանի
Հանգստեան
Ի 20 ամսոյն Մարտի 1894 ի
Թիւ Փրկչեան

---

* Թաղէոս։

## 55.

## ՀՆՈՒԹԻՒՆՔ

Ո՛չ նուազ հետաքրքրական են հետեւեալ երկու գրեթէ նմանօրինակ տապանագրերն, որոց անհեթեթ մարմարիոններն պատեհ առիթով մը հին գերեզմանատունէն նորը փոխադրուած կը մնան այնպէս զուրկ 'ի տապանաց։ Երկուքն ալ երկաթագրով կամ գլխատառով են քանդակուած ըստ հին ոճոյ, երկուքն ալ գրեթէ հաւասարապէս եղծուած... և շատ տեղերը անընթեռնելի վիճակի հասած, բաց աստի միոյն մէկ անկիւնը կոտրած է, այնպէս որ հարկ եղաւ կէտադրութեամբ նշանակել այդ տեղերը։ Նաեւ յարմար դատուեցաւ՝ առանց անոնց բառասխալներն ու տառասխալները ուղղելու թողուլ իբր 140 տարուան մօտ հնութիւններ, թէ իբր հայելի ժամանակին տեղական Հայոց գրագիտական նկուն կարողութեան և թէ մնայուն իբր յիշատակ աւանդելի 'ի ձեռս ապագայից (1).

(1) Տեղւոյս Ս. Եկեղեցին իբր 140—150 եւ 250 տարուան հնութիւններ ունենալէ զատ, ունի նաեւ Կոնդակ մը, Աւետարան մը, Յայսմաւուրք մը եւ ուրիշ խել մը եկեղեցւոյ գրքեր, ամենքն ալ ձեռագիր եւ ոմանք մագաղաթեայ. իսկ 135 տարուան քանդակեալ հին արձանագրութիւն ունի միայն ձախակողմեան Պահարանին լուացարանի կճեայ քարին վրայ, որ հետեւեալն է. «Յիշ″-տակէ աւազ'ն Ըստանպօլցի Պօղմաճի մհս Պօղօսին՝ իւրն՝ որդոյն կողակցոյն՝ ծնողացն թվ ռմթ մայիս մէկն՝ Հայր մեր».

## 56.

### (Ասլանեան Ազարիա)

.....ն դիր հանգստեան
..... հողոյս էդեալ զընտան
...ած ցանգաց իշխանական.
...* անին որդի Ազարեայն
Վերափոխի աստի կենաց
Սամառնացեալ առ Տր փառաց
Սուգ և կսկիծ թողաւ 'ի տանց
Դուստր և որդոյն և զաւակաց.
Ի մուտ հոկտեմբերի եթն շաբթաց
Ի գերեզման Հայոց ազգաց
Ի ներ թըւոյս ազգիս մեծաց
Հազար երկու հարիւր վեցնաց
Կէլիպօլու ծովահայեաց
Ի քաղաքիս է պանտխտաց
Որք հանդիպիք տուք ողորմիք
Ասել հայր մեր որ յերկինս ես։

---

* «Ասլանին» պիտի լինի՝ ստուգուած մեր եկեղեցւոյն [illegible]եր 150 տարուան Ցիշատակարանի կոնդակէն։

## 57.

(Սուքիաս Գնելեան)

Այս է տապան հանգստեան,
Ի մէջ հողոյս եդեալ գնտան,
Սրբութեան երանեալ անուան,
Վերափոխի աստի կենաց,
Սամառնացեալ առ Տր փառաց,
Սուգ և կսկծ թողաւ տնաց,
Դուստր որդոցն զավակաց,
Է մեծ պահոց 'ի մուտ մարտի,
Հողվ թաղած երրդ շաբթի,
Ի Նր թըվոյս ազգիս մեծաց,
Հազար երկու հարիւր ութենաց,
Փոքրիկ քղաքէ պանտխտած,
Կէլիպօլու ծովահայեաց,
....... հազարի.....
Սուգիեաս որդի տցու Գնէլոյս,
Տէ՛ս այսպէս հայր իմ ժմոյս,
Որք հանտիպք այս տապանի,
Պարտէք ասել Հայր մեր որ երկնի։

## 58.

## ՆՄԱՆԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ճարտասանութեան կանոնաց մէջ կարեւոր տեղ մը գրաւած է նմանաձայնութիւնը, որ իրարու նման և նոյնահնչիւն բառերով կամ յանգերով կը

կազմուլ։ Մեր նախնիք շատ իսկ զբաղեցան այ-նու, ահա առ 'ի յարացոյց և 'ի զբօսանս յառաջ կը բերուին հետեւեալ մի քանի օրինակք։

Ծովն 'ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովն ծփծաղէր։

ՇՆՈՐՀԱԼԻ

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից
Ի վեր 'ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային։

ՆՈՅՆ

Տատանին տագնապաւ տերեւք տնկոց
Եղեւլին ծառոց շարժեալք 'ի հողմոց ուժգին բաղխելոց։

ՆԱՐԵԿԱՑԻՆ

Որ 'ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք
Բարեբանիս Սրբուհի . . . ։ ԽՈՐԵՆԱՑԻՆ ի Շարականս.
Բանին զրուանք երկնից, բարբառին հրեշտակք.
Բանին գերեզմանք, բորբոքի գեհեն . . . ։
Գալարին երկինք որպէս մագաղաթ.
Գերագոյն գոչէ փող Գաբրիէլեան.
Գերապանծ լուսով զարդարին արդարքն . . . ։

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁՆ

Կոչողն եհաս վերին կոչողին,
Կոչնատէր անեղ, կոչողն անաւոր,
Դատաւորն անաչառ, դատաստան արդար.
Հրեշտակք անողորմ դատեն զմեղաւորս . . . ։

ՆՈՅՆ

Արդ և ես՝ ազգային գրագիտաց տրուպն՝ նոյն Նախնեաց ո՛չ թէ իրականին, այլ գէթ ստուերականին 'ի բացեայ հետեւիլ փափաքելով մերթ ընդ մերթ առիթներ կամ բարուր և հրապոյր ունեցեր եմ Հայ. և Տաճկ. նմանաձայնութիւններ տողել փորձելու, ինչպէս գրքուկիս Տաճ. Տապանագրերուն 8, 25 և 38 թուոց մէջ կը տեսնուին այդպիսի փանաքի նմանութիւններ, որպիսի է (մահ. ուան վրայ յօրինուած) հետագայն ալ և ուրիշ հետեւորդք:

## 59.

## ԷՃԷԼԻՄԻԶ ՂԱՖԻ՛Լ ՏԻՐ

Ճէլիլ Ճէնապ ճէպրութ իլէ չու ճիհանը էթտի վար.
Ճէննէթ իլէ ճէհէննէմին արասը ճէսիմ տիվար.
Ճիւնհասըզա ճավիտ ճիւմպիւշ, ճիւնհալըեա ճէֆա վար.
Ճան ու տիլտէն ճահտ էտէյսէն, անտէ ճիտտէն ճապա վար:
Էյ՛ նէր ճիվան, կէ՛օր ճա պէ ճա չու ճէնազէ թաշըարըն.
Պունտա ֆարգը եօգ տուր ասլա չաքէր իլէ չէզարըն.
Պու կիւն պանա, օնա իսէ, սանա տա կէլիր եարըն.
Ույանըզ օ՛լ, թէտարիք է՛թ, տաղըրգտա եօլ պազարըն:

---

## 60.

Նախորդին 'ի մեր գրաբար թարգմանութիւնը, համապատասխան բառիւք, նոյնայանգ տառիւք և նմանաձայն հնչմամբք յօրինուած:

Փառաւոր Տէր ամենակալ իւր զօրութեամբ զաշխարհ ա-

բար

*Արքայութեան եւ դժոխոց ընդմէջ խորոց եդ մեծ պատ-*
*ուար.*
*Սուրբ արդարոյ խինդ յաւիտեան, մեղաւորի նեղ չարաչար.*
*Եթէ սրտի մտօք ջանաս, անդէն անչուշտ յարգ ընկալար։*
*Ո՛վ պատանի, տե՛ս ցիր եւ ցան ըզ տապանաց սստ գքարըն.*
*Աստանօր չի՛ք բընաւ ընդհատ ո՛չ ծառայի՛ն ընդ կայսերըն.*
*Եթէ այսօր պատահիցէ ինձ եւ նմա, գուցէ եւ քեզ վաղ*
*աւուրըն.*
*Լիջի՛ր արթուն, եւ կա՛լ քեզ կազմ 'ի կեանս զուղուոյն*
*ըզպաշարըն։*

---

## 61.

## Ի Ս. ԾՆՈՒՆԴ ՄԵՐՈՅ ՓՐԿՉԻՆ

*Ծոցածնունդ ծագմամբ ծնար,*
*Ծանրամեղացըս ծանուցար.*
*Ծածկեա՛ ծննդեամբդ զծանր ծրար,*
*Ծիածանիդ ծիրանեփառ։*

---

## 62.

## ՏԻՐԱՄԱՅՐՆ ԱՌ Ս. ԽԱՉԻՆ

*Կուսածինըն Կենարարին,*
*Կամաւ կախեալ կախաղանին.*
*Կաթնամատոյց կանգնեալ կուսին,*
*Կիսահագագ կայ կարօտին։*

---

## 63.

## ԱՅԲ, ԲԵՆ, ԳԻՄ ՈՎ ՇԱՐԱԿԱՆՔ

Թերեւս յիս անձնական յաւակնութիւն վերբերեւեալ կարծուի ոմանց՝ փորձելով յօրինել այդպիսի նմանաձայնութիւններ, և ջանալով գործածել անոնց մէջ գլխագրովք կամ սկզբնատառիւք յօդեալ այլ և այլ անուններ, մինչդեռ այս եղանակ ո՛չ այլ ինչ է, թէ ո՛չ՝ իբր ստորագրութիւն կամ՝նշանակ 'ի ծանօթութիւն երգողին կամ երգուածին (1)...։

Արդ՝ ինձ ամէն առիթ կը ներկայացուի յառաջ բերելու և չգիտցողաց ծանօթացնելու մեր երանաշնորհ Ս. Թարգմանչաց և նախնեաց ոմանց Սրբոց Հարց և մասնաւորապէս Ս. Ներսէս Շնորհալւոյն գրաւոր աշխատութեանց մէջ այդպիսի մտօք յօրինած մի քանի Տէրունի և Սրբենի շարականներն, որց մէջ՝ եթէ փափաքողք դիմեն, յայտնապէս կ՚երեւին թէ՛ Հայկական Այբբենարանի 36 գրոց վրայ շարուած տուներ և թէ՛ տողե-

---

(1) Որպիսի քերթուածներ գործածուած են հիներէն ալ. արդի Եւրոպացին զայն իւր նախնիքներէն փոխառելով կոչեր է acrostiche, յունարէն ակրօն, ծայր եւ ստիխոս, տող նշանակող բառերէ կազմելով. հետեւաբար տողից կամ տանց առջի գրերուն որ եւ է անուն կազմող ոտանաւոր խօսքի մը առ մեզ կ՚ըսուի, ծայրանուն տաղ, երգ, եւն.

րու գլխագրոց վրայ և ուրիշ միջոցօք ի յիշատակութիւն նշանակուած անուններ ։

Նշանա՛կ արդարեւ միշտ անեղծ և յիշատա՛կ անտխեղծ, որք արժանապէս անմահացուցին թէ այդ շարական երգերն, թէ տօնական երգուածներն և թէ սրբազան երգողներն ։

Ահա Ա, Բ, Գ ով յօրինուած շարականներ.

1. Այսօր զուարճացեալ եւն, Ս. Գրիգոր Լուսաւորչի վրայ ըսուած՝ Տ. Յովհաննէս Պլուզ Վարդապետէն ։

2. Այսօր անճառ եւն, Աւագ ուրբաթու գիշերին վրայ, Տ. Ներսէս Շնորհալիէն ։

3. Արեգականն արդարութեան եւն, Ս. Յովհաննու Մկրտչի վրայ, Տ. Գրիգոր Սկեւռացիէն ։

4. Անձինք նուիրեալք եւն, Ս. Հռիփսիմեանց վրայ, Տ. Կոմիտաս Կաթուղիկոսէն ։

5. Անսկիզբն բանն Աստուած եւն, Քաջ Նահատակաց վրայ, Տ. Յովհան Մանդակունիէն ։

6. Անճառելի բանդ Աստուած եւն, Ս. Ղեւոնդեանց վրայ, Տ. Ներսէս Շնորհալիէն ։

7. Արարչական բանին հրամ. եւն, Արարչութեան եւ այլոց վրայ, Տ. Ներսէս Շնորհալիէն ։

8. Օրհնեմք (1) զքեզ եւն, Օրուան 3°, 6° եւ 9° ժամուց վրայ, Տ. Ներսէս Շնորհալիէն ։

---

(1) «Աւրհնեմք» կը գրուէր 'ի հնումն. արդէն յայտնի է՝ թէ Յունաց ձայնաւոր գիրն օ, Լատինացւոցմէ մեր մէջ մտաւ ԺԲ. դարէն ետք՝ դիւրաւ կարդալու ու գրելու համար. նախնիք անոր տեղ կը գրէին աւ, ինչպէս փոխանակ ըսելու՝ օրհնել, օգնել, օր, հօր, մօր, եւն. կը գրէին՝ աւրհնել, աւգնել, աւր, հաւր, մաւր, եւն ։

9. Աստուած անեղ անժամ. եւն, Ննջեցելոց վրայ Տ. Ներսէս Շնորհալիէն։

10. Արեւելք գերարփին եւն, Ս. Աստուածածնի վերափոխման վրայ, Տ. Կիրակոս Վարդապետէն, որ իւր այս շարականին տուները՝ Հայոց 36 գրերով աւարտելէ ետք՝ երկու տուներ ալ կը նուիրէ իւր անուան յօդուելուն, զոր ահա կը շարէ այսպէս՝ առ Տէր եւ առ Տիրամայրն Մարիամ ուղղելով բանաստեղծական աւիւնն.

Կերտող բոլոր եղելոց
Իմանալեաց և ստորայնոց
Րաբուն բարի անմարմնոց
Առեր պատիւ յերկրայնոց
Կուսական տօնիւ փոխմանս
Որդեգրութեան լիցուք արժանՍ։

Վասն որոյ աղաչեմ՛
Աստուածածին Մայր Բանին
Րամեալ զհոգի և զմարմին,
Դարձեալ 'ի սէր փեսային
Արժանի լիցուք
Պտղոյ դրախտին,
Երանաւէտ կենաց Տնկին։

---

Դարձեալ օ ի տեղ ով գործածուած է յատուկ անուանց մէջ. ինչպէս՝ Մովսէս, Յովսէփ, Յովհաննէս, Յակովբ, եւն, քիչ տեղ մինակ ո ով, ինչպէս Յակոբ, եւն։

## 64.

# ԾԱՅՐԱՆՈՒՆ ՇԱՐԱԿԱՆՔ

Ահա տառերու գլխագրովք անուն կամ խօսք յօդող շարականներ, գրերն ճիշդ այնպէս օրինակուած, որպէս կազմել կամեցեր են հեղինակներն ։

1. Նորոգողն տիեզերաց եւն. Ներսեսի է բանս այս ։
2. Նորոգեալ կզզիք եւն. Նէրսէս ։
3. Նոյն եւ նման եւն. Ներսէս ։
4. Նորահրաշ պսակաւոր եւն. Ներսէսի երգ ։
5. Նորաստեղծեալ բանն եւն. Ներսէս ։
6. Նահապետին Աբրահամու եւն. Ներսես ։
7. Նայեա՛ սիրով եւն. Նէրսէսի էրգ ։
8. Սրբութիւն սրբոց եւն. Ստեփաննոս ։
9. Յաղթող եւ սուրբ հայրապետ եւն. Յակոբայ ։
10. Խորհուրդ խորին եւն. Խաչատուր ։
11. Յաւուրց վերջին եւն. Յոհօնիսի է երգ ։
12. Վարդագոյն վառեալ եւն. Վարդ ։
13. Սարսափելի որոտմամբ եւն, Սարգիս ։
14. Յանսկզբնական ծոցոյ Հօր եւն. Յակոբ ։

Իսկ՝ Աշխարհ ամենայն եւն. զղջական ողբերգութիւնն և Առաւօտ լուսոյ եւն. աղօթական երգն, ինչպէս յայտնի է, Ս. Ներսէս Շնորհալւոյն հրաշալի գրչէն ելած խորին ապաշաւանաց սրտաճմլիկ խօսքեր ըլլալով՝ իրենց մէջն մի տողից բառերը Ա, Բ, Գ ով են կազմուած ։ Ինչպէս որ նմին նմանութեան գէթ 'ի բացեայ՝ գլուխ 'ի խոնարհ

հետեւիլ կարծելով, մինչ 25 ամեայ հասակս կը բոլորէի, քահանայի մը պահանջմամբ, փորձեցի շարադրել նոյնանման նմանաձայն քերթուած մը, որոյ մէջ միտքն՝ յափշտակուած, սիրտն՝ զգածուած և բարձրաթռիչ սաւառնած մեղսամակարդ անձի մը բերնէն ապաշաւելու կամ զղջալու խոսքեր կ'ստեղծուին. որոց ընթացիւք աստէն գիտել կը տրուի միանգամայն մեր հին գրականութեան Ոսկեդարէն 'ի վեր Հայ լեզուին ճոխ ու ճկուն և աննկուն կարողութիւնն. յոյր սակս՝ 'ի խնդրոյ բանասիրաց ոմանց՝ Ս. Երուսաղէմի (երբեմն հրատարակուող) Սիոն ամսագրի 31 մարտ 1874ի թուոյն մէջ 'ի լոյս ընծայուեցաւ հետագայ վերնագրի ներքեւ.

## 65.

## ԲԱՆՔ ԱՊԱՇԱՒԱՆԱՑ

1. Անհուն, անքննին, Արարիչ Աստուած,
Անհեղ, ահաւոր, և անիմացուած,
Անքոյթ ապաւէն, անժամ, անկասկած,
Ամենամեղիս անձաւ անարկած.

2. Բարձրունակ բարւոյդ բողոք բիւրային,
Բառնամ բացագանչ բանիւք բօթային,
Բազմողբերգելի բիծք բոսորային,
Բիւրապատկեցան բծողիս բնաւին.

3. Գլխակոր գնամ գետնաքարշ գործովք,
Գոռոզ գազանին գերեալ գալարովք,
Գերեաց գերեհա՛նդ, գթարկեա՛ գթովք.
Գրաւեա՛ գրաւս գթառէր գրկօք.

4. Դատապարտ դրոշմեալ դէտ դատաստանին
Դժոխոց դիւաց դիւրադաւ դնիմ,
Դասապե՛տդ դասուց դիւրորս դիւանին,
Դասեա՛ դաւաճանս դասուն դրժողին.

5. Ենթադրեալ եմ եօթնածին երկանց,
Երրի, երկկիւղի, եւս երկբայմանց,
Երկի՛նք և երկի՛ր, երա՛մք երջանկաց,
Եղո՛ւկ երգեցէք երկրիս երկրակեաց.

6. Զառածայ զազրեալս զեղծիւք զանազան,
Զօրէն զեղխ զանխուլ զրուցեմ զրրաբան,
Զազիր զզուանօք զնդամ՚ի զնդան,
Զերծո՛ զիս զուարթո՛ւն, զօրե՛ղդ զօրական։

7. Էացուցիչ է՛նդ էացեալ էից,
Էլօհիմ է՛լի էութիւնակից,
Էինաբուն է՛ էրիւք էակից,
Էակցութեամբդ էջ էականիս.

8. Ընթանամ ընթացս ընդվայր ըղձական,
Ընդվայրակոչկոծ ընկճեալ ընդունայն,
Ընկղմիմ ըղձիւք ըմբռնողական,
Ընկալո՛ւչդ, ընկա՛լ սահրիւրականս.

9. Թակարդ թշնամւոյն թաւալեցոյց թիւր,
Թուլացեալ թողեալ թարթափիմ թափուր,
Թանձրաձայն թառանչ թափեմ թալկաւոր,
Թողութիւն թափեա՛, թագուն թա՛գաւոր։

10. Ժահըր ժահահոտ ժայթքեմ ժանտաբա
Ժանտապատուհաս և ժամավաճառ,
Ժանեաց ժըպըրհին ժառանգեալ ժանգառ
Ժամանաւորեա՛ առ ժողովարարս։

11. Իրաքաջ իշխո՛ղ, ինքնանուանական,
Իմաստապարգև, ինքնակամ իշխան,
Ինքնազօր ինքնեակ, իմըդ իջեւան,
Իջջի՛ր 'ի խնդիր իսկ իժակորեանս։

12. Լըպըրծեաց լիրբս լափլէզ լեգէոնս,
Լըլկիմ լեզուագարս լալագին լալով,
Լըքեալ լքանոտս լըկտանօք լիով։
Լո՛ւր լալականիս, լցեալըդ լուսով։

13. Խարբալ խանձողին խարբալեաց խրոխտս,
Խաւարաւ խըղճի խօթացոյց խոտս,
Խաչաչարչար խո՛յ, խոյացի՛ր առ խոնջս,
Խաղաղածաւալ խնամեա՛ խոցոտս։

14. Ծուղակաւ ծըփչին ծուփ 'ի ծուփ ծըփիմ,
Ծանրաբեռնութեամբ ծիւրելով ծըծիմ,
Ծագեա՛ ծառայիս, ծաղիկդ ծոցածին,
Ծաւալումն ծագմանց ծորմանց ծովային։

Կ. Կենօք կամակոր կրքիւք կուրացեալ,
Կենդանեաց կըշռոյն կենակից կացեալ,
Կարապե՛տդ կենաց կթոտխ կըթուցեալ,
Կանգեա՛ կործանեալս կոչմամբ կենաձայն։

Հ. Հաղորդեալ հոգւով հացիդ հըրաշից,
Հեստեմ հանապազ հորըդ համայնից,
Հաստի՛չդ հողոյս, հայցեմ հաղածնիս,
Հրաշանորադիլ հացիւդ հոգելից։

Ձ. Ձանձիր ձաղանօք ձաղկեցայ ձախող,
Ձրդաելով ձրդեալ ձորոյն ձախակողմն,
Ձեռնօտանդակեա՛ ձեռագործս ձայնող,
Ձօնելով ձըրի ձօն ձիւնափայլող։

Ղ. Ղամպարապայծառ ղապտեր ղօղեղյս,
Ղեկավար ղօղուն ուղեւորելոյս,
Ղօղանջեմ ղօղանջ առ ղամպարալոյսդ։
Ղեկավարութեամբ ղօղակս ղորկեցո՛։

Ճ. Ճոպճոպիմ ճըգնամբք ճըմլիմ ճըգնութեամբ,
Ճեպիմ ճենճերիմ ճարպասութեամբ,
Ճողոպրեա՛ ճընշեալս, ճի՛շդ ճըշմարտաբան,
Ճանապարհակցի՛ր 'ի ճոխդ ճեմարան։

Մ. Մոլորեալ մըտօք մեղայ մոլեգին,
Մաճացու մեղօք մեռայ մեղսային,
Մաքրեա՛, մխածին, մաշելոյս մարմին,
Մեղաց մաքրութեամբ մըկըրտարանին։

21․ Յօրացեալ յախտըս յուսահատաբար,
Յաւէտ յոգնածուփ և յիմարաբար,
Յաւիտենից յոյս Յիսո՛ւս յայտաբար։
Յայտնեա՛ յիս յանկարծ յեղանակ յօժար։

22․ Նուաղիմ նըքթիմ նուաճեալ նեղիմ,
Նենգոտին նետիւ նոյնաբար նեխիմ,
Նեղելոյս նըպաստ նախայօժարիմ,
Ներեա՛ նիւթակիս, ո՛վ Նախասկիզբն։

23․ Շեղեցայ շըռայլս շըրջշըրջիմ շըփոթ,
Շեշտելով շանթիւ շեշտոչին շողոքորթ,
Շնորհաբաշխ շըքեղդ, շընորհեա՛ շընորհք,
Շորթելով շնորհաց շողակաթ շընորհք։

24․ Ո՛հ ոգեպարտիս, ոգեսպառ ողբամ,
Ուռկանաւ որսչին ուծանամ ունայն,
Որոնեա՛ ոճիրս, որով ողջանամ,
Ուժգնասիրտ ուխտիւ որբս որդիանամ։

25․ Չոքայ չարաչար չարչարիմ չարաւ,
Չարախօսեան չարեօք և չարահամբաւ։
Չնչին չըքոտի չըքանամ չուառ,
Չքացո՛ զչարիս, չքմե՛ղդ չարչարեալ։

26․ Պասքիմ պարտասիմ պարունակ պարտուք,
Պառակտիչն պարծի պղծացեալ պարուքն,
Պաշտպանեա՛, պահպա՛ն, պատժելոյս պատուք,
Պարենաւորեալ պանիդ պատառօք։

27. Ջախջախիմ ջըլօքս, ջեռանիմ ջերմովս,
Ջըրհեղեղակուլ ջըրմըխիմ ջըրովս,
Ջնջեա՛, ջե՛րմագութ, գջիրմ ջլատելոյս,
Ջախելով ջախ ջախ ջոկոցն ջատագով:

28. Ռումբ ռմբաւորին ռմբակոծեաց ռիշտս,
Ռահինախըռով ռահեմ ռամիկս,
Ռոշնական ռա՛զմիկ, ռահակցի՛ր ռեկիս,
Ռետական ռուփաւդ ռընտեալ ռամզարկըս:

29. Սըրտաթունդ սարսիմ սարսափաւ սըրոյդ,
Սահիմ սովամահ սուր սակրաւ Սըրբոյդ,
Սուրբըդ Սա՛բաւովդ, սըրտիս ստեղծուածոյդ,
Սատեսջի՛ր սըրբիլ սիրով սքանչելւոյդ:

30. Վա՜յ վարակելոյս վըշտօք վայրաքան,
Վարանիմ վաղվաղ վայրկենէ վայրկեան,
Վերաշնչեա՛, վեհդ, վայիցս վախճան,
Վերստին վառիլ 'ի վեհիդ վահան:

31. Տաժան տագնապաւ տատանիմ, ո՛վ Տէր,
Տոչորիմ տապաւ տըրփանաց տարբեր,
Տեառնդ տնօրէնութեամբ տարտամս տածեր,
Տո՛ւր տրտմեցելոյս տիպար տիրասէր:

32. Բազարդ Բաբունի բապետ բընական,
Բոտեա՛ բոտինս բախճանալ բամայն,
Բակերտեա՛ բակերտ բախալիդ բախճան,
Բամիլ բակերտեալ բախիւդ բամկական:

33. Ցանցիւ ցանցարկուէն ցանգ ցընդիմ ցաւովք
Ցանկական ցնորիւք ցայտիմ ցոփանօք,
Ցօլ ցօղացնցուղ ցընծացո՛ ցաւոտս,
Ցօղարկեալ ցաւոց ցըրտաշունչ ցեխոյս։

34. Ւիւսեցի ղայս ողբ մընալ յաւիտեան,
Ւիւծ հիւթականս յայտնեալ պարտապան,
Ւի՛ւն անդր Աստուած, աշխարհաց իշխան,
Ւիւսողս արա՛ թողութեան արժան։

35. Փափաքիմ փառաց Փրկչիդ փղձկելոյս,
Փառաւորեսցես փափաքս փոքուս,
Փեսայարանիդ փարելով փառս,
Փողել փառատրողօք փառաբանութիւնս։

36. Քաջաղերսութեամբ քոյդ քաջածնողի,
Քառանիւթական քաղցր քերովբէի,
Քաւեա՛ քերթողըս, ո՛ քարոզելի,
Քրիստոսդ քաղցրահեղ, քաւիչ քնցեղիս։

## 66.

## ՈՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Յայտ իսկ է ամենուն՝ թէ ուխտագնացութիւնն, ինչպէս ամէն ժամանակ ամեն կրօնից մէջ, նոյնպէս առ Հայս բարեպաշտական դեր կը խաղայ.... Ուստի Օսմանեան Տէրութեան մէջ (ի բաց

թողլով մի քանի մանաւորները) Ս. Երուսաղէմ, Արմաշ և Ռոտոսթօ մեծապէս կը պանծան այդ-տեսակէտով...: Արդ՝ այլ և այլ ժամանակներ այդ երեք ուխտատեղիքն այցելելով հոգևոր խօկմանց տպաւորութեանց ներքև՝ իբր միակ ե-ւեթ հոգևոր նուէր ինձ հետ բերի այդ հոգե-զբօս վայրերու տաճարաց դրանց վրայի Յիշատա-կարաններն, յորոց միայն երկուքը աստ դնել յարմար կը դատեմք:

---

## 67.

### Արմաշու Ս. Եկեղեցւոյն Յիշատակարանը.

### Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

Կամօքն Աստուծոյ չքնաղակերտս այս տաճար տեառնագրեալ յանուն Տիրուհւոյն մերոյ Զարխափան Սուրբ Աստուածածնի կառուցաւ տրովք ողորմութեան բարեպաշտօն որդւոց Հայաստանեայց կաթուղիկէ Ս. Եկեղեցւոյ. եռանդուն ջանիւք և հոգաբարձութեամբ Արքեպս.ի և Վանահօր Ս. Ուխտիս Տեառն Գէորգայ Կրպտ. Ալեքսանեանց. գործակցութեամբ Միքայէլ, Մեսրոպ, Խորէն և Ներսէս վարդապետաց:

Տացէ Տէր Աստուած յազգէ յազգ երկրպագել

'ի սմա ամենայն Հաւատացելոց ։ Ցամի Տեառն 1872 օգոստոսի ԺԴ, և 'ի մերում ՌՅԻԱ ։

---

## 68.

### Ռոտոսթօյի Ս. Թագաւոր Եկեղեցւոյն Յիշատակարանը.

*Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո*
*անշարժ պահեա և զերկրպագուս*
*անուանըդ քում պահեա' 'ի խաղաղութիան ։*

*Յառաջնորդութեան արթուն քաջ Հովուին,*
*Յակոբայ արհւոյն վեհ սրբազանին.*
*Ձեռամբ Մինասայ ազնիւ Աղային,*
*Արքունի գործոց ճարտարապետին.*
*Իսկ իշխանք տեղւոյս և այլք գլխովին,*
*Որ մեծաւ ջանիւք զայս յառաջատին ։*

1841 Օգոս. 7

*(Ի հարկէ նորոգութեան թուականն պիտի լինի այս) ։*

---

## 69.

### Ռոտոսթոյի Ս. Փրկիչ Եկեղեցւոյն մէջ գտնուող մահարձանն.

*Այս տապան հանգստեան Քեմախցի Գրիգոր*
*Աւագ վարդապետի. սա ծերացեալ լի*
*աւուրբք (ռմբ) 1092 ամսոյն սեպտեմբերի*
*հանգեաւ.*

*Ձեռամբ սուրբն բեւեռ փայտին Փրկչական,*
*Ածաւ այս վայր աղբիւր բուժից մաքրական.*
*Որ և Նախորդ Հովիւ կարգի քաջարթուն,*
*Հովուել զգաղթեալ զիւր հօտ Նորեկ բարենմոյն:*

---

## 70.

### Ս. ԹԱԳԱՒՈՐ

Այդ մահարձանի թէ թուականն և թէ մի քանի բառերն թէեւ քննադատելի են, սակայն այլում ժամանակի թողլով, առ այժմ հարկ կը լինի աստէն 'ի մէջ բերել թէ՝ ըստ պատմական աւանդութեան՝ Փրկչական Խաչին վերնագրի բեւեռն ուխտատեղի կազմուած է 'ի Ռոտոսթօ եւ կը կոչուի Ս. Թագաւոր՝ ըստ ոմանց՝ անուն առնելով «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» վերտառութենէն: Այդ Ս. Բեւեռն կնքեալ մասնատփով մետաղեայ քառաթեւ խաչի վրայ զե-

տեղուած է, որոյ վրայ Քրիստոսի Խաչելութեան մարգարտայեռ և ադամանդակուռ պատկերն ընդելուզեալ է. Նորին կեդրոնը գոհարազարդ սրտաձեւ կանանչ զմրուխտ մը դրուած է։

Խաչն ունի պատուանդան մը՝ որ կը հաստատէ թէ նախապէս ձողի մը վրայ դամուած է եղեր։ Ս. Բեւեռն ունի տախտակեայ պահարան մը, որոյ ճակատը նկարագրուած է Հայր Աստուծոյ պատկերը, մէջը՝ Խաչելութիւն և չորս անկիւններն՝ չորս Աւետարանիչք. ձեռագործ մը՝ որ 7—8 հարիւր տարուոյ հնութեամբն վկայաթղթերու պէտք չթողուր։

Կայ նաեւ պղնձէ տախտակի մը երկու կողմն նկարուած սքանչելի պատկեր մը Ս. Աստուածածնի Վերափոխման և Քրիստոսի մանկութեան՝ թէև անթուական. բայց կ'երեւի թէ 4—5 դարու գործ է. զի կ'ըսուի թէ զայդ ալ վերոյիշեալ Գրիգոր վարդապետն բերած է Դերջանէն, թերեւս «սըրըխըը» Ս. Թորոսի վանքէն, որ կը գտնուի լեռան մը գագաթը ընդ մէջ այդ քաղաքի և Երզնկայի....

71.

Մահարձան բնիկ Ռոտոսթօցի բազմերախտ Արքեպիսկոպոսի մը, որ ի Պոլիս Գալաթու Հայոց Ս. Եկեղեցւոյն հիւսիսային դաւիթը կայ թաղուած՝ հետագայ պատմաբանական արձակ տապանագրով։

*Աստ հանգչին ոսկերք Տ. Թադէոս սրբազան Արքեպիսկոպոսի Թրակացւոյ* (1)*, որ ծնաւ յամի փրկչին* 1810. *ձեռնադրեցաւ վարդապետ յ'*2 *Դեկտ.* 1834։ *Զփոխանորդութեանն վարեաց զպաշտօն երկուց Պատրիարքացն Կ. Պօլսոյ Տ. Մատթէի և Տ. Յակովբայ Ս. Արքեպիսկոպոսացն. և 'ի* 17 *օգոս. ամսեան* 1852 *ամին ընտրեցաւ յ'Արքեպիսկոպոսութիւն Հայրենի երկրին՝ ուր եկաց ամս իբր* 25։ *Եւ ապա հրաժարեալ պանդըխտեցաւ 'ի Պօլիս և կարգեցաւ քարոզիչ Ս. Եկեղեցւոյս, միշտ դնելով զանձն յուրաստ 'ի շինութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ սատար եղեւ յաջողութեան խնդրոյն գերեզմանատան Բերայի և շինութեան զանգակատան Ս. Եկեղեցւոյս.*

Հանգեաւ 'ի Տէր, 1875 ամին յ'7 Մարտի

---

(1) *«Առաջնորդ Թրակիոյ» ալ մերթ կը գրուէր. զի երբեմն այդ վիճակին գրեթէ այնքան կը տարածուէր, զոր եւ կը հաստատէ քովս գտնուող ընդօրինակուած հին կոնդակ մը յանուն Ռոտոսթօյի Հայոց. իսկ կարծել թէ «Թրակիա» կ'ըսուի Ռոտոսթօյի ալ, այդ՝ սխալ է։ Այդ բազմահայ քաղաքն ըսուած է Հռեդեստոն, Ռոտոսճըգ, եւ յաճախ՝ Թէքիրտաղ կամ Թէքֆուրտաղը. իսկ այժմ գրական ասպարիզի վրայ սովորական եւ յաճախեալն է Ռոտոսթօ անունն։*

## 72.

Աղեխանդրիոյ Հայոց Ս. Եկեղեցւոյն ճակատը գրուած.

*Կառուցաւ Տաճարս յանուն Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ։ Արդիւամբ կալուածոց Նուբրեալ ազգիս 'ի մեծանուն Պօղոս Պէյէ Եուսուֆեան Զմիւռնիացւոյ 'ի յիշատակ հոգւոյ նորին ։ Ի վերատեսչութեան Վսեմ. Թադւոր Փաշայի Ցակոբեան Զմիւռնացւոյ, հաւատարիմ անխոնջ ջանիցն և աշխատութեանց ։*

Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի.

Սկիզբն հիմնարկութեան տաճարիս յամի 1881 դեկտ. 27 եւ 'ի թուականութեանս Հայոց ռյլդ.

Աւարտեցաւ շինութիւն Ս. Եկեղեցւոյս յամի Փրկչին 1884 եւ 'ի թուին Հայոց ռյլդ ։

---

## 73.

*Ցիշեալ Եկեղեցւոյն հիւսիսային պատին գրեթէ կից թաղուած երկու մեծանուն անձանց մահարձաններն.*

Առաքէլ պէյ Նուպարեան

Ծնեալ 'ի Զմիւռնիա 'ի 27 Դեկտ. 1826 ամի

Կոստակալ Սէնաարի եւ Խարթումի.

Վախճանեցաւ 'ի Խարթում 'ի 13 Սեպտ. 1858-

Ցիշեցէք յաղօթս ։

---

## 74.

Ո՛վ հոգի ազգասէր Պօղոս Պէյի Եուսուֆեան
Որ զմայրն······.·. եւ զնորս Եգիպտոս
Ի սուգ տարաժամ թողեալ վերացար·

29 Դեկտ· 1843

*Զայս յաւերժ յիշատակ չնաշխարհիկ հանճարոյդ
Ի քոյինս դաստակերտ տաճար տէրունեան
Ցազգակցացդ սիրոյ ընկա՛լ և հանգի՛ր։*

10 Յունվ· 1844

---

## 75.

Գահիրէի Հայոց Ս· Եկեղեցւոյն ճակատը գրուած·

*Կարողութեամբն Աստուծոյ կառուցաւ Ս· Տաճարս Նորասաահման· յանուն Սրբուհւոյ Աստուածածնի, արդեամբ Լուսաւորչադաւան առ հասարակ ազգիս Հայոց որ յԵգիպտոս· աշխատութեամբ Մարաշցի Գաբրիէլ սրբազան Արքի Եպիսկոպոսի, 'ի Միաբանութենէ Սրբոյն Սաղիմայ·*

Ի 1839 'ի 17 Դեկտեմբերի:

---

## 76.

Ցիշեալ Արքեպիսկոպոսի մահարձանն Ս. Եկեղեցւոյն մէջ, (անունն յօդուած է տողից սկզբնատառերով).

### Դուք էք լոյս աշխարհի

Գերզգօն Հովիւ հօտին Քրիստոսի,
Արքեպիսկոպոս Հայկազնեան տոհմի,
Բարեխնամ Տեսուչ հոգւոց ամենի,
Րաբունի ընտիր պատուոյ արժանի,
Ի Մարաշ ծնեալ բնիկ հայրենեօք,
Էր ծաղկեցուցիչ տեղւոյս տաճարօք.
Լի ես դու ուրեմն տապան գեղապանծ,
Բարեօք որ կրես զայս պատուական գանձ։

---

## 77.

Կալլիպոլիի Հայոց Ս. Թորոս Եկեղեցւոյն տաճարի դրան վրայ գտնուող յիշատակարանն.

Շնորհիւ Տեառն Աստուծոյ կառուցաւ Ս. Եկեղեցիս յանուն Սրբոյն Թէոդորոսի քաջայաղթ զինաւորին. 'ի Պատրիարքութեան Տ. Կարապետ Արհի Եպիսկոպոսի, և յԱռաջնորդութեան վիճակիս Տ. Առաքել Արքեպիսկոպոսի. Արդեամբք և ծախիւք առ հասարակ մերազնէից բնակչաց տեղ-

ւոյս այսմիկ, բարեպաշտ և Աստուածասէր ժողովրդեան հաւատացելոց 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:

Յամի Տեառն 13 Սեպտ. 1828

## 78.

## ԿԱԼԻՊՈԼԱԲՆԱԿ ՀԱՅՈՑ ՎՐԱՅ ԿԱՐԻ ԿԱՐՃ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Իբր երեք դար յառաջ՝ Կամխու երկրէն աստ գաղթող 8—10 տուն հէգ ընտանեաց սերնդեան արդիւնքն է տեղւոյս Հայ հասարակութիւնը, որ այսօր իբր 206 տուն բաղկացնելու բաղդն ունեցեր է: Անկէ 156 տարի յառաջ՝ Կրետացի Տ. Աբրահամ Կաթուղիկոսի ձեռնասունն եղող Յովհաննէս Վարդապետ Գասպարեան՝ իւր հոգեւոր Տիրոջմէ ետքը՝ յաջորդելով Ռոտոսթոյի Առաջնորդութեան, անմիջապէս թեմերը այցելել ելած միջոցին եկած է տեղս ալ, ուր՝ կ'երեւի թէ աւելի քան այլուր իւր ուշադրութիւնը գրաւած է Հայ ժողովուրդը, մտադիր եղած է ակնարկ մը ձգել այդ փոքրիկ հօտին անցելոյն վրայ... ուստի իւր Աթոռը վերադառնալուն՝ ինքնագիր գրովն յօրինած և ղրկած է այսր պատմաբանական կոնդակ մը, որ ցարդ տեղւոյս Ազգ. Թանգարանին մէջ խնամով կը պահուի իբր պատուական հնութիւն՝ վաղուց կազմուած լինելով իբր գեղեցկայարմար մատենիկ:

Այժմ ճիշդ 156 տարուան է այդ կոնդակ. որո մէջ յիշեալ լուսամիտ հեղինակն կը պատմէ իրմէ 160 տարի յառաջ անցնելոյն և մասամբ մը՝ իւր ներկային վրայ. կոնդակն ինքնին բաւական երկար է, ուստի առ այժմ միայն նորին յառաջաբանը աստ կը դրուի նոյնութեամբ, այսինքն՝ առանց ուղղուելու ո՛չ տառասխալն, ո՛չ բառասխալն և ոչ իսկ կէտադրութիւնն։ Եւ ահա՝

«Ի թվին ռ. ճ. ձ. է. և 'ի սեպտեմբերի. իե. առաջներորդ Առաջնորդութեանս իմոյ ի Թ.էքիրտաղու Յովհաննէս վարդապետիս եկի ի քաղաք Կէլիպօլի. և հարցեալ այցելութեամբ. սոյն Կէլիպօլի խանի մէջն յարմարեալ Ս. Թորոս անուն ժամատանն, եղեալ անօթեղինաց և ըզգեստեղինաց. յիշատակարանն քննեցի և որոնեցի. և ոչ գտի լիակատար. յիշատակարանի կոնդակն, թէպէտ գտա ծայրատ կիսատ, և ոչ խնդրոյ իմոյ. վասն որոյ հարձեալ գծերագոյան թէ քահանայից և թէ աշխարականացն. ստուգիւ և վկայութեամբ նոր ի նորոյ շարագրեցի. թէ որպէս կամ զիարդ եկեալ են. Հայք 'ի Թ.էքիրտաղ եւ թէ Կէլիպօլ. որպէս պատմէ Առաքել պատմագիրք... վասն որոյ ի նոյն եկեալ ժամանակէն, ըսկսա և բերեալ մինչ իմ ժամանակս հասուցի. թէ քանի առաջնորդ եկեալ է և որքան կացեր են. և որպէսաբար է գնաց. նոյն ժամանակին, և մանաւանդ՝ թէ զինչ է պատճառն. Ս. Թորոս Անուան. օծեըն. զժամա-

ւնն։ Զայսուիկ եւ Յովհաննէս վարդապետս հա-
ագեալ ի մի ժողով և արձանագրեցի 'ի կոնդա-
իս այսմիկ, որ յամ յամէ հանդիսաւոր աւուրց
յատեանն կարդան և հանգստեան չարականիւ
իչատակեն. զնախնիքն և զյարմարող մատենիս»։

Յիշեալ Յովհաննէս վարդապետը՝ զայդ յառա-
ջարան աւարտելէ ետք կ՚սկսի Կալլիպոլիի Հայոց
Յիշատակարանի կոնդակն, որով ոչ նուազ պատ-
մաբանական լոյս կը սփռէ անոնց մութ անցելոյն
վրայ, ինչպէս նաեւ մասամբ իւիք Ռոտոսթոյի
Հայ գաղթականութիւնը կը յիշատակէ։ Զայդ ա-
մենայն ընդհուպ ունիմք հրատարակել, եթէ նե-
րեն պարագայք։

---

## 79.

## ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԳԱՆԱԿՁԻՆ ՈՒՂԵԳԻՐՔԸ

Կալլիպոլիի Ս. Լուսաւորչեան և Ս. Հռիփ-
սիմեան երկսեռ վարժարաններն անշուշտ պիտի
ունենան իրենց անուանց արժանի ընթացք, հեռի
պահուելով 'ի հարկէ՝ խոպան գլուխներէ, անպէ-
տան ձեռնարկութիւններէ և անարժան ոտնձգու-
թիւններէ ....։[1]

---

[1] Վերջին դէպքերը, մանաւանդ Ափրոդիտական
և Բագոսական երկրպագու երկու դասատուաց գոր-
ծերը ցաւալի եղան յոյժ. թէև անմիջապէս փոնտուած

Տեղական ժողովուրդը՝ թէև սակաւաթիւ և նիւթապէս անզօր, սակայն իւր երկու հայրենակցացն՝ Վ. Վ. Գ. Ա. Վարդապետի և Խ. Ք. Կ. Գ. Քահանայի նախաձեռնութեամբ և Պատ. Թաղ. Խորհրդոյ աջակցութեամբ, ներքին և արտաքին Հանգանակութեան ձեռնարկելով յաջողած է կառուցանել այդ երկու շէնքեր՝ Ս. Թորոս Եկեղեցւոյն յարակից ընդարձակ պարտիզի մը դէպ 'ի արեւելեան և արեւմտեան ծայրերը. մանչոցը քարաշէն՝ հիմնովին նոր 'ի նորոյ պատրաստուած. իսկ աղջկանցը փայտաշէն՝ նոր գնուած հին տունէ մը նորոգութեամբ ձեւակերպուած։

Նա իսկ քահանայն՝ 1889 օգոս. 4 ին՝ Գեր. Տ. Հ. Եպս. Դիմաքսեանին (արդ'ի նորընտիր Ս. Տեղապահին) միջնորդութեամբ Ազգ. Պատրիարքարանէ ստացուած ժապաւինեալ Տումար 'ի ձեռին՝ նախապէս 'ի Կ. Պոլիս գրեթէ միայն մասնաւոր անձանց դիմած, և ապա հետզհետէ այցելած է 3-4 Առաջնորդական վիճակներ և քանի մը կարեւոր տեղեր. ինչպէս որ այդ պաշտօնական Տումարի մէջ ուրոյն ուրոյն արձանագրուած և պաշտօնապէս վաւերացուած կան ու կը մնան թէ տեղիք և անձինք իրենց անուններով և թէ որոշուած նպաստք իրենց գումարներով, որոց համար արդէն ժամանակին հրատարակութիւնք եղած և

---

և գրական ասպարիզի վրայ պատուած է մանաւանդ առաջինը.

ող. Խորհրդոց ալ պաշտօնապէս շնորհակալու-
թիւններ ուղղուած են անոնց՝ մի առ մի նշանա-
կելով ընդունուած գումարներն և անձերն միան-
գամայն. և այս՝ թէ մանաւանդ երախտապար-
տութիւն խոստովանելու, թէ երկուստեք ազա-
տասիրութիւն ցուցընելու և թէ յանդիմանելու հա-
մար այնպիսիներ, որք եթէ երբէք ժպրհին նա-
խանձու կամ ատելութեան ոգւէ շարժելով յաջա-
ղել... որպէս երբեմն ժպիրհ մը Ընդհանրականի
Խորհրդի հեղինակին դէմ։

Արդ աստէն 'ի բաց թողլով հանդանակութեան
փիրաւոր դժուարութեանց նկարագիրն, որոց
մէջ ամենափափուկ մաս կը կազմէ դրամական
պաստ ուղելու խրթին խնդիրն, հարկ կ'զգացուի
այդ ամենուն առկայող հանդանակչին վրայ դառ-
նալ և նորա ծովային ու ցամաքային արկածից
կերնագրական ծանօթութիւններն եւեթ 'ի մէջ
բերել. (ամէն բարեմտական դիտողութիւն սիրով
ընդունելու և պատասխանելու խոստմամբ)։ որ-
պէս զի դէթ լակոնական ոճով գաղափար մը ներ-
կայուի այն խիզախ անձին գրեթէ ամբողջ տարի
մը առ անդ կրած վտանգաց վրայ, զորս արդէն
իր Ուղեգիրքը նկարագրած եւ իբր կենսագրա-
կան Յիշատակներ պահած է, որոց միացընելով
նորա ոչ սակաւ անձնուէր ծառայութիւնքն (թէև
այդ ամենայն իբր Աւետարանական «անպիտան
ծառայ ընելու պարտաւորած», և դարձեալ՝ «ո՜չ

թէ 'ի հաւատոց, այլ միայն 'ի գործոց արդարանալու» ոսկեղենիկ պատուիրանաց հետեւելու ճը-գամբք չարժած), այսուհետեւ կը բաւէն իւր ամբողջ կեանքը պահելու և զինքը օրինակելի կացուցանելու, հետեւողութեան կամ յանդիմանութեան արժան կանգնուելով հանդէպ ոմանց կամ ուերի միայն բանիւ կամ հաւատով արդարանալ ուզողներու։

Ահա 'ի ստորեւ կը ցուցուին այդ վերնագրեր·

---

## 80.

## ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՐԿԱԾԻՑ ՎՐԱՅ

1. Կալլիպոլիէ նորա մեկնման առաջին օրը՝ Շարքէօյի ճամբուն վրայ՝ Տէվէ-պաղըրտան ըսուած տեղը՝ ծովային անդքի մը միջեւ ալետանջ վտանգն։ 2. Ի պոլիս ինֆլուէնզայէ վարակում և տառապում։ 3. Բաակահատի մը խաբէութեան

---

(*) Երբ ճշմարտութիւնն է խօսողն, անմեղադրելի կ'ըլլայ խօսուողն, եթէ երբեք անձնագով ալ թուի· զի Պատմութեանց և նոյն իսկ Ս. Գրոց մէջ իւր դէպքերը կամ արկածները յայտնող շատերու կը պատահիմք, ինչպէս՝ 'ի մէջ այլոց՝ երեքտասաներորդ Առաքելոյն՝ Ս. Պօղոսի գրածը Բ. Կորնթ. ԺԱ. 24—26, Եւ դարձեալ՝ չորեքտասաներորդ Առաքելոյն և Պարթեւական տեսանողին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի իւր Յաճախապատում մատենին մէջ խօսածներն են։

ու հետամտութեան 'ի դերև հանումը։ 4. Զմիւռնիոյ և Պիրէոնի միջև փոթորկայոյզ գիշեր մը, զարհուրանք և ծովախտէ տառապանք։ 5. Ի Գահիրէ ինֆլիւէնցայէ վերըմբռնում և հեղձամղձուկ տագնապ։ 6. Յոպպէի առջև սոսկալի ամպրոպ մը (ուռական), շոգենաւուն ընկղմելու կամ խրելու ճգնաժամն և կորուստներ։ 7. Միջերկրականի բացերը յոյն գողի մը գիշերային փորձն, փոխադարձ վարձն ապտակ և դաշոյնի երկիւղ մինչև Իզմիր։ 8. Մալկարայի շրջակայքը ասպատակող արիւնարբու Հապիլ և երկիւղալի ուղևորութիւն դէպ 'ի Ռոտոսթօ և 'ի Չօրլու եւն. (քիչ ետքը այդ մարդկային գազանին արիւնաթաթաւ կառափը տեղս բերուելով ամբողջ օր մը 'ի տես դրուեցաւ հրապարակաւ)։ 9. Նորա ընտանեկան յարկին երեքօրեայ անմխիթար լացն ու սոսկալի իրարանցումն՝ կարծեցեալ բանտարգելութեան մ'առթիւ և անհոգ կամ անճիգն չօրպաճիք։ 10. Ի Տէտէ-աղաճ Հայ պանդոկի մը մէջ վեցօրեայ հիւանդութիւն և Հայու մը գթութիւնն։ 11. Միտիլինէ կղզւոյն մէջ Փլիւմարի մօտ խեռ երիվարով մէկտեղ անկում մը իբր Արտաւազդ ոմն 'ի հնում, թէև անվնաս։ 12. Վերադարձ և բարոյական մրրիկ մը, թէև անյաջող. (զի Տէր փրկեց, կը փրկէ և պիտի փրկէ իւր զինուորեալ եկեղեցւոյ զաւակը և չեն կրնար զնա յաղթահարելո՛չ «դրունք դժոխոց», ո՛չ խորք անդնդոց և ո՛չ իսկ մահ...։

*Թերեւս օր մը յիշեալ արկածք իրենց մանրամասնութեամբք ալ հրատարակուին, եթէ առիթ տրուի և պատեհութիւն ձեռնտու լինի. յայնժամ թող այդ լինի իբր սեւաքանդակ շիրիմ մը կընքեալ պահող ապիկարի մը անձնուէր ճգանց աճիւններն . . . :*

*Ի դէպ է սակայն աստ խոստովանիլ թէ այդ հանգանակիչն բարոյապէս վարձատրուած է յաւէտ ամեն երախտագէտ սրտերէ . . . : Արդէն Ս. Լուսաւորչեան Նոր Վարժարանին մէջ մասնաւոր տեղ մը պատրաստ կը կենայ միշտ խնկ և ցանդ, յատկացուած հետագայ արձանագրութեան:*

---

## 81.

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս» . . . :

« Ծանիր զքեզ » :

*Ահա կամօք Տեառն Աստուծոյ էից էին եռալուսեան,*
*Կանգնեալ 'ի հիմանց հաստատեցաւ Տաճարս լուսոյ եւ գիտութեան,*
*Անուանեալս արժանապէս Վարժարան Սուրբ Լուսաւորչեան.*
*Տրոց արդեամբք տեղւոյս Հայոց լուսակարօտ ժողովրդեան.*

*Խորին ջանիւք Տէր Խորենայ Քահանայի Կ. Պարթեւեան.*

*Սիրոյ խնամով կրթասիրաց և արտաքին Նպաստիւք արդեան,*

Տացէ Տէր Աստուած Արարիչ լուսոյ լուսաւորիլ աստ լուսաւորչասեր մանկանց քաղաքիս Հայ ժողովրդեան:

4382 — 1 Մայիս 1890 — ՌՅԼԹ.

---

## 82.

## ՎԵՐՋԱԲԱՆ

*Մինչ կ՚զբաղէի գրքուկիս տպագրութեամբ և տարւոյս Յունիսը իւր 28 թիւը կը բոլորէր և օրն էր Գշ. և մինչ մեր Ս. Եկեղեցին կը տօնէր սրբոցն Կոստանդիանոսի և մօրն Հեղինեայ յիշատակը, ճիշտ կէս օրին տեղի կ՚ունենայ Կ. Պոլսոյ սոսկալի գետնաշարժն, երկրագնդիս աղիողորմ տեսարանաց յաճախակի շարժառիթն...: Հետեւեալ օրն ահուդողով քաղաքս կը մեկնիմ. միայն 50 օր վերջը կրնամ վերադառնալ գործոյս գլուխը: Ուստի այս վերջին մի քանի տողերս կը նուիրեմ այդ չարաղէտ դէպքի յիշատակին:*

*Ահա՛ վերջապէս՝ աշխարհ մը, որ մակերեւոյթը խեղճ մահկանացուք գրաւած կը ճգնին ապահովապէս բնակելու, ուր ամէն չէնք և հաս-*

տատութիւնք կը հիմնեն և կը կարծեն անսասան. այլ ափսո՜ս, ահա այն մեր վստահած աշխարհն ալ կը շարժի՜ ու կը սասանի՜... անշարժն է միայն գերեզմանի կնիքը՝ ըստ մաղթողական բանի անշարժ կղերին.....։

## ՎՐԻՊԱԿ

| Էջ | Տող | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 3 | 6 | Մերովբեան | Սերովբեան |
| 3 | 14 | Հռոտոս | Հռոդոս |
| 8 | 11 | Ներ | Տէր |
| 9 | 16 | զթել մարդկան , | զթել կենաց մարդկան |
| 17 | 15 | Գիլիգոր | Գրիգոր |
| 48 | 17 | ուտագնացութիւն | ուխտագնացութիւն |
| 60 | 16 | ժապաւիլեալ, | ժապաւինեալ |

# ԲԱՌԱՑՈՒՑԱԿ*

*Ախրէթ* Ա. *հանդերձեալ աշխարհ*
*Ահպապ* Ա. *բարեկամներ եզ. հապիպ*
*Բէս* Պ. *յետոյ, ուրեմն*
*Բէսէնտ* Պ. *հաւանութիւն*
*Գապր* Ա. *գերեզման*
*Գատէմ* Ա. *ոտք*
*Գատէր* Ա. *Նախասահմանութիւն, ճակատագիր*
*Գուտտաս իւլ Գուտտաս* Ա. *Պատարագիչ.*
*Եաման* Թ. *անագորոյն, խիստ*
*Եատքեար* Պ. *յիշատակ*
*Էճէլ* Ա. *մահ, օրհաս*
*Էֆլաք* Ա. *երկինք. եզ. Ֆէլէք*
*Թա՛ճիլէն* Ա. *փութով, ճեպով*
*Թէպար* Պ. *ազգատոհմ, խումբ*
*Թէտպիր* Ա. *հնարք, միջոց*
*Թիւրապ* Ա. *հող*
*Իլմա* Ա. *ամփոփիլ*
*Ինսաֆ* Ա. *արդարամտութիւն, խիղճ*
*Ի՛պար* Ա. *հուժկու*
*Լէպ* Պ. *շուրթ, եզր.*
*Լէպ օլ. լցուիլ*
*Լիզամ* Պ. *մահ, վախճան*
*Խալիգ* Ա. *Արարիչ*
*Խաք* Պ. *հող*
*Խէնտան* Պ. *խնդացող, ուրախ*

---

* Ա. Արաբ. Պ. Պարս. Թ. Թուրքերէն կը նշանակեն ։

Խըշմ Գ. բարկութիւն
Խիւտա Գ. Աստուած
Կիւզար Գ. անցնող, տուող
Հայյ Ա. կենդանի
Հէզարան հէզար Գ. հազարք հազարաց
Հէյլած Ա. երկունք
Հուզզար Ա. Ներկայ գտնուողք
Հուլուլ Ա. հասնիլ, մտնել
Հուպպ Ա. սէր
Ղալիպ Ա. յաղթող
Ճայ Գ. տեղ
Ճաշ Գ. չտեմարան
Ճէնապ Ա. Մեծութիւն
Ճէպպար Ա. բռնաւոր, ամենազօր
Ճէսէտ Ա. մարմին
Ճիհան Գ. աշխարհ, տիեզերք
Մահշէր Ա. վերջին դատաստանի օրն
Մատէր Գ. մայր
Մէսթուր Ա. տողուած, գրուած
Մէվթ Ա. մահ
Մէրտան Գ. մարդիկ, եզ. մէրտ
Միննէթ Ա. բարիք, բարիքը երեսին զարնել
Միւսէմմա Ա. անուանեալ
Նա՛շ Ա. ճաշ, դագաղ
Նէճր Ա. արմատ
Նիեազ Ա. աղերս, աղաչանք
Նիկեահ Գ. տեսիլ, նայուածք
Նութգ Ա. ճառ, խօսիլ, ըսել
Շահան Գ. Թագաւորք, եզ. շահ
Շատման Գ. ուրախ, զուարթ
Շի՛ր Ա. քերթուած, բանաստեղծութիւն
Ուլու Ա. մեծ

Ումման Ա․ խորին ծով
Ջաղ․ Պ․ տարիք
Պա Ա․ հետ, մէկտեղ, ․․․ով
Պագի Ա․ Միացական
Պար Պ․ բեռ․ անգամ
Պարի Ա․ Արարիչ
Պիւրհան Ա․ փաստ․ ապացոյց
Սաթըր Ա․ տող
Սալիմ Ա․ զերծ, ապահով
Սէպար Պ․ պատրուած
Սինէ պէ սինէ Պ․ կուրծք կուրծքի
Սինն Ա․ տարիք
Տիհան Պ․ բերան
Տէսմ Պ․ ձեռք
Տիեար Ա․ երկիր, գաւառ, եզ․ տար
Րահ Պ․ ճամբայ, ուղի
Րահմ Ա․ արգանդ, գութ
Րահիմ Ա․ ողորմած
Րահման Ա․ գթած․ Աստուած
Րամագ Ա․ վերջին շունչ
Րանա Ա․ գեղեցիկ, լաւ
Րուզ Պ․ օր
Փիր Պ․ ծեր
Քէլամուլլահ Ա․ Բանն Աստուծոյ
Քէպիր Ա․ մեծ
Քէրիմէ Ա․ աղջիկ
Ֆանի Ա․ անցաւոր
Ֆաշ Ա․ տարաձայնել

# ՑԱՆԿ

Նախաբան, Կեանք եւ մահ

1. Տ. Ստեփան եւ 25 Քահանայք
2. Տ. Թէոդորոս
3. Արքուհի Թ. Գափամաճեան
4. Տ. Պօղոս
5. Հճի Աբրահամ Եղիազարեան
6. Տ. Յովհաննէսի Երէցկին
7. Տ. Յովհաննէսի Մելքոն
8. Հճի Թագւոր Տէր Յովսէփեան
9. Թագուհի Մ. Ասիպեան
10. Հճի Յակոբ Տէր Յովսէփեան
11. Բրաբիոն հճի Սարգսեան
12. Մահարձան չորից Պարքեւեանց
13. Հճի Յակոբ Կ. Գումրուեան
14. Թագուհի կին հճի Սարգսեան
15. Հճի Նուրի Յ. Տէր Յովսէփեան
16. Տ. Յովհաննէս
17. Հճի Ղազար Ս. Կիւրճեան
18. Հճի Աբրահամ Պէզիրճի
19. Հճի Մարիամ կին Գ. Արուքեան
20. Վարդան Տէվլէքեան
21. Յովհաննէս Թ. Կիւրճեան,
22. Հճի Մարիամ մայր հճի Սարգսեան
23. Մարիամ Յ. Տանկազեան
24. Հճի Բարսեղ Մ. Հանըմեան
25. Հճի Յովսէփ Յ. Տէր Յովսէփեան
26. Թագուհի կին Յ. Գարաֆէյզեան
27. Սառա կին Ա. Գալըպճեան
28. Յակոբ Չինարեան

29. Թագւոր Լեւոնեան
30. Յարութիւն Պագալ Պօղոսեան
31. Մաննիկ կին Յ. Նահապետեան
32. Հնի Թադէոս Կ. Չիզմէնեան
33. Պաղտասար Տէր Յովհաննէսեան
34. Հնի Տիգրան Ն. Զարալյաճեան
35. Հնի Արթին Արութեան
36. Հնի Համբարձում Փարիզ
37. Հնի Եզեկիա Յ. Ասիպեան
38. Թորոս Յ. Չինարեան
39. Կիւլլիւ կին հնի Մինասեան
40. Կիւլլիւ կին Յ. Մեսրոպեան
41. Աննա Պ. Պէզիրճեան
42. Հնի Երանիկ կին հնի Նահապետեան
43. Ասանէթ Տ. Խ. Կ. Պարթեւեան
44. Կարապետ Յ. Զօպանեան
45. Երկու Մաննիկներ Յ. Պաղտասարեան
46. Յովհաննէս Թ. Տէվլէթեան
47. Վերգին կին Մ. Մէնկէնէնեան
48. Մարիամ կին Թ. Տէվլէթեան
49. Սրբուհի կին Ե. Անասօլուեան
50. Յարութիւն Յ. Սարգսեան
51. Տիգրան Գ. Կարապետեան
52. Հնի Յակոբ Ե. Ասիպեան
53. Թադէոս Յ. Չիզմէնեան
54. Հնի Աննա կին Ե. Ռսիպեան
55. Հնութիւնք
56. Ասլանեան Ազարիա
57. Սուքիաս Գնէլեան
58. Նմանաձայնութիւն
59. Էնէլիմիզ ղաֆիլ տիր
60. Նախորդին թարգմանութիւնը

61. Ծնունդ Փրկչին
62. Տիրամայրն
63. Այբ, բէն, գիմ ով Շարականք
64. Ծայրանուն Շարականք
65. Բանք ապաշաւանաց
66. Ուխտագնացութիւն
67. Արմաշու Ս. Եկեղեցին
68. Ռոտոսթօյի Ս. Եկեղեցին
69. Ռոտոսթօյի նախկին Հովիւն
70. Ս. Թագաւոր
71. Մահարձան Ռոտոսթօցի Արքեպս.ի մը
72. Աղեքսանդրիոյ Ս. Եկեղեցին
73. Առաքել պէյ Նուպարեան
74. Պօղոս պէյ Եուսուֆեան
75. Գահիրէի Ս. Եկեղեցին
76. Տ. Գաբրիէլ Արքեպիսկոպոս
77. Կալլիպոլիի Ս. Եկեղեցին
78. Կալլիպոլաբնակ Հայեր
79. Հանգանակութիւն եւ հանգանակչին ուղեգիրքը
80. Երկոտասան արկածից վրայ
81. Յիշատակարան Ս. Լուսաւորչեան վարժարանի
82. Վերջաբան
Բառացուցակ